

ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2018թ. Հայաստանում տեղի ունեցած
հեղափոխության պատճառների և
հետևանքների լույսի ներքո



Շապիկի լուսանկարը՝ Նարեկ Ալեքսանյանի

Սույն հետազոտությունն իրականացվել է Արտակ Քյուրումյանի կողմից՝ Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի և Քաղաքական դիսկուրս հանդեսի համատեղ ծրագրի շրջանակում: Հետազոտության նպատակն է ամփոփել Հայաստանի հարկային համակարգում առաջարկվող փոփոխությունների, հատկապես՝ պրոգրեսիվ և համահարթ եկամտահարկի հիմնահարցերը, ինչպես նաև, օգտագործելով, միջազգային փորձն ու առկա վերլուծական և փաստական նյութը՝ համակողմանի պատկերացում ստանալ հարկային բարեփոխումների մասին: Այն կարող է լավ հիմք հանդիսանալ հետազոտության վրա հենվող հանրային քաղաքականության և փաստարկված որոշումների մշակման համար:

Քաղաքական դիսկուրս հանդեսը 2018թ. սեպտեմբերից ի վեր բազմաթիվ ուսումնասիրություններ է կատարել և հոդվածներ հրապարակել հարկային համակարգի ներկայիս մարտահրավերների և հեռանկարների վերաբերյալ: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամն օգտագործել է աշխարհի տարբեր երկրներում գործող գրասենյակների իր ցանցը, հարկային համակարգի, պրոգրեսիվ և համահարթ հարկման մեթոդաբանության լավագույն մասնագետներին Հայաստանում տեղի ունեցող քննարկումներին ներգրավելու համար:

Սույն դիրքորոշման փաստաթուղթն իր մեջ ներառում է անցած 6 ամսվա ընթացքում կուտակված նյութն ու ուրվագծված առաջարկությունները: Այն ընգրկում է թե՛ մասնագիտական հարուստ նյութ, թե՛ Հայաստանի տնտեսական քաղաքականության այսօրվա խնդիրների անաչառ և բազմակողմանի քաղաքատնտեսական վերլուծություն: Օգտագործվել են 2019թ. փետրվարի 12-ին Երևանում մեր կողմից կազմակերպված «Հարկային համակարգ, արդարություն և տնտեսական զարգացում» միջազգային գիտաժողովի նյութերը, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տվյալներն ու այլ հրապարակումներ:

Համոզված ենք, որ այս մանրակրկիտ աշխատանքը կծառայի Հայաստանի տնտեսական զարգացումը խթանող արդյունավետ և արդար հարկային համակարգի ձևավորմանը:



Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի
Հայաստանի գրասենյակ



Քաղաքական դիսկուրս հանդես

Բովանդակություն

1. Ներածություն	7
2. Հարկերը և հարկային քաղաքականությունը	8
2.1. Եկամուտների և շահույթների պրոգրեսիվ և համահարթ հարկում	12
2.2. Լաֆֆերի կորը	15
2.3. Այլ վճարներ	17
2.4. Արևմտյան երկրների հարկերի կառուցվածքը	19
3. ՀՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը	20
3.1. ՀՀ հարկային համակարգի նկարագիրը	21
3.2. Հարկային համակարգի առաջարկվող փոփոխությունները	24
3.3. Առաջարկվող փոփոխությունների եկամտային հետևանքները	26
3.4. Առաջարկվող փոփոխությունների հետևանքները մարզերի վրա	28
3.5. Առաջարկվող փոփոխությունների ռեգրեսիվությունը	29
3.6. Գույքահարկի բնագավառում դիտարկվող փոփոխությունները	31
3.7. Միջազգային կառույցների տված գնահատականները	32
3.8. Փոփոխությունների քննարկման մասնակցայնությունը	36
4. Վերլուծություն	37
5. Եզրակացություններ	46
6. Առաջարկություններ	48
Օգտագործված աղբյուրներ	49

1. Ներածություն

ՀՀ կառավարությունը հարկային օրենսդրության փոփոխություններ է նախա-
ծեռնել, որի նպատակներից մեկը եկամտային հարկի պրոգրեսիվ համակարգից հա-
մահարթ համակարգի անցումն է: Օգտակար է հիշել, որ «պրոգրեսիվ» հայերեն նշա-
նակում է «առաջադիմական»:

Այս փաստաթուղթը ներկայացնում է մի խումբ քաղաքացիների դիրքորոշումը,
ովքեր համաձայն չեն ՀՀ կառավարության նախաձեռնած վերը ներկայացված փոփո-
խությունների գաղափարի հետ և այդ առումով հանդիսանում է դիրքորոշման փաս-
տաթուղթ (position paper):

Եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխությունն առաջին տարում կհանգեց-
նի պետական բյուջեի 27-37 մլրդ դրամ եկամուտների կորստի, որոնք կարող էին օգ-
տագործվել:

- Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության բարելավման համար,
- հանրակրթության որակի էական բարելավման համար, ինչը աղետալի պայ-
մաններում սովորող մի շարք դպրոցների աշակերտներին հնարավորու-
թյուն կտար ամենատարբեր բնագավառների վերաբերյալ խորը գիտելիքներ
ստանալ, կրթությունը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատու-
թյուններում, հետագայում բարձր աշխատավարձ ստանալու և բարեկեցիկ
կյանքով ապրելու համար,
- առողջապահական ծառայությունների բարելավման համար, ինչը հնարավոր-
ություն կտար որակյալ ծառայություններ մատուցել հասարակության լայն
շերտերին, որոնց զգալի մասն այսօր զրկված են դրանից,
- սոցիալական պաշտպանության ամենատարբեր խնդիրներ լուծելու համար
(օրինակ՝ կենսաթոշակները բարձրացնելու),
- ՀՀ առաջ ծառացած բնապահպանական և այլ խնդիրները լուծելու համար:

Համահարթ դրույքաչափին անցումը հարկաբյուջետային համակարգի պրոգրե-
սիվությանը կարող է չվնասել, եթե այն բացառություններ նախատեսի ցածր եկամուտ
ունեցող աշխատողների համար, իսկ բարձր եկամուտ ունեցողների դեպքում հար-
կային օրենսդրությունը կիրարկվի ամբողջությամբ: Այս դեպքում հարկային համա-
կարգը կարող է ավելի պրոգրեսիվ լինել, քան ավանդական իմաստով պրոգրեսիվ
համարվող համակարգը: Սակայն մեծ սողանքներ ունեցող հարկային համակար-
գը չի կարող այդպիսին համարվել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրոգրե-
սիվ համակարգից հրաժարվելու փաստարկների թվում ՀՀ կառավարությունը նշել է
բարձր եկամուտ ունեցողների հարկերից խուսափելը, ապա այլ եղանակով պրոգրե-
սիվության հասնելու փորձերը կարող են անարդյունավետ լինել: Հարկաբյուջետային
համակարգը կարող է պրոգրեսիվ դառնալ, եթե համահարթ և սպառողական հարկե-
րի կիրառման արդյունքում հավաքագրվող եկամուտներն օգտագործվեն տնտեսա-
կան աճը խթանող և աղքատությունը կրճատող ծախսերի վրա:

Համահարթ դրույքաչափերի օգնությամբ ստվերային տնտեսությունը կրճատելու փորձը կարող է ապարդյուն լինել, քանի որ հասարակության մի մասի կարծիքով մի քանի տարի հետո կառավարությունը կարող է ստիպված լինել բարձրացնել հարկերը երկրի առջև ծառացած խնդիրները լուծելու համար: Պրոգրեսիվ հարկման համակարգը արտաքին աշխարհից եկող ցնցումների դեպքում երկրի ֆինանսատնտեսական համակարգը պաշտպանելու, այդ պայմաններում երկրի անվտանգության և հանրության սոցիալապես խոցելի խմբերի առջև ստանձնած ֆինանսական պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ միջոցների կուտակման աղբյուրն է և այդ ցնցումներից պաշպանության առաջին շերտը: Պրոգրեսիվ հարկման համակարգից հրաժարվելով կառավարությունը թուլացնում է այդ շերտը: Հայտնի են մի շարք դեպքեր, երբ ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո երկրները, հետևելով ԱՄՀ հորդորներին, վերադարձել են հարկման պրոգրեսիվ համակարգի:

2. Հարկերը և հարկային քաղաքականությունը

Հարկային քաղաքականությունը տնտեսական քաղաքականության այն կարևորագույն բաղադրիչներից մեկն է, որի հետ կապված բազմաթիվ հետազոտություններ են կատարվել ակադեմիական հանրության, կառավարությունների, միջազգային կառույցների, փորձագետների և այլ շահառուների կողմից: Տարբերակվում են երկու տեսակի հարկեր՝ ուղղակի և անուղղակի:

Ուղղակի հարկերի դեպքում հարկային պարտավորության կատարման հետ կապված բեռը կրում են ֆիզիկական անձինք կամ կազմակերպությունները՝ այդ հարկերը վճարելով իրենց եկամուտներից, շահույթից կամ գույքի դիմաց: Կառավարությունը հարկի գումարը ստանում է եկամուտը կամ շահույթը ստացողից: Եկամուտը ստացողը, ի տարբերություն ավելացված արժեքի և ակցիզային հարկերի, իր որոշումներով չի կարող խուսափել եկամտային հարկ վճարելուց: Բազմաթիվ երկրներում եկամտահարկը գործատուն գանձում է աշխատավարձը վճարելիս, ապա գանձված գումարը փոխանցում է պետական բյուջե: Եկամտային հարկը և շահութահարկը դասվում են ուղղակի հարկերի թվին:

Անուղղակի հարկերը սովորաբար գանձվում են ապրանք կամ ծառայություն մատակարարողի, աշխատանքներ կատարողի կողմից այդ ապրանքների գնորդների, ծառայությունները սպառողների կամ աշխատանքներն ընդունողներից դրանց դիմաց վճարման ժամանակ: Եթե երկրում կան այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք չեն հարկվում ավելացված արժեքի հարկով՝ (այսուհետ՝ ԱԱՀ), ապա տնային տնտեսությունները կարող են խուսափել ԱԱՀ վճարելուց կամ ավելի քիչ ԱԱՀ կվճարեն՝ սպառելով ԱԱՀ-ով չհարկվող ավելի շատ ապրանքներ և ծառայություններ:

1. Սոցիալական խնդիրների լուծման նպատակով կառավարությունները կարող են որոշել ԱԱՀ-ով չհարկել սոցիալապես անապահով խավերի կողմից ավելի շատ սպառվող առաջին անհրաժեշտության ապրանքները: Եվրոպական մի շարք երկրներում մանկական հագուստը չի հարկվում ԱԱՀ-ով:

ԱԱՀ-ի մեծությունը սովորաբար առանձին նշվում է վճարման փաստաթղթերում: Անուղղակի հարկեր գանձող կազմակերպությունը որոշակի պարբերականությամբ այդ գումարները փոխանցում է կառավարությանը: Անուղղակի հարկերի դեպքում հարկային պարտավորության կատարման հետ կապված բեռը կրում է ոչ թե ապրանքը մատակարարողը, ծառայությունը մատուցողը կամ աշխատանքներ կատարողը, այլ դրանք սպառողը: Անուղղակի հարկերի թվին են դասվում ԱԱՀ-ն, ակցիզային և սպառողական² հարկերը:

Անուղղակի հարկերն ավելի հաճախ կրում են ռեգրեսիվ բնույթ, իսկ ուղղակի հարկերը կարող են լինել ինչպես պրոգրեսիվ, այնպես էլ՝ ռեգրեսիվ: Անուղղակի հարկերը կարող են պրոգրեսիվ բնույթ ունենալ, եթե օրինակ, առաջին անհրաժեշտության սնունդը, որը մեծ տեսակարար կշիռ ունի ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների ծախսերի կառուցվածքում, ազատվի ԱԱՀ-ից: Նույն կերպ եկամտային հարկը կարող է լինել ռեգրեսիվ, եթե ավելի բարձր եկամուտների վրա ավելի ցածր դրույք տարածվի կամ, եթե եկամուտների որոշ տեսակներ, օրինակ, կապիտալ եկամուտները չհարկվեն:

Մի շարք երկրներում հարկային համակարգի երկու հիմնական բաղադրիչներն են եկամտային հարկը և ԱԱՀ-ն: Կենտրոնական լատինամերիկյան փորձի վրա՝ Barreix և Roca-ն (2007) առաջարկում են ավելի մեծ ուշադրություն դարձնել եկամտային հարկի հնարավորությունների վրա: Ի լրումն եկամուտներ ապահովելուն, եկամտային հարկն ունի նաև սոցիալական համերաշխությանը նպաստելու կարևոր դերակատարում, քանի որ եկամտային հարկի կիրառման արդյունքում հավաքագրվող գումարների մեծ մասը գոյանում է բարձր եկամուտներ ունեցող հարկատուների վճարներից: Bird-ի (2009) կարծիքով եկամտային հարկի հուսալի համակարգ ունենալու համար զարգացող երկրները պետք է ընդլայնեն հարկման բազան, ինչը տարբեր երկրներում կարող է նշանակել պետական պարտատոմսերից ստացված եկամուտների, աշխատակիցներին տրված ոչ դրամական տեսքով արտահայտված հատուցումների, կապիտալ եկամուտների հարկում, արտոնությունների բացառում և չհաշվառվող տնտեսության ծավալների կրճատում: Հարկային արտոնություններ տալիս են և հարկային բարենպաստ միջավայր ստեղծելուն ձգտում են բոլոր կառավարությունները: Բարձր եկամուտ ունեցող երկրները բարենպաստ հարկային միջավայր են ձևավորում հետազոտությունների և զարգացման ծախսերի (R&D) համար (IMF 2015): Ցածր եկամուտ ունեցող երկրներն առաջարկում են հարկային արձակուրդներ (tax holidays) և հարկերի ցածր դրույքներ: Միջին եկամտով երկրները հաճախ ազատ հարկային գոտիներ են ստեղծում:

Վերջին տասնամյակներում արձանագրվել է եկամտային հարկի դրույքաչափերի նվազում: Լատինական Ամերիկայի երկրներում բարձր եկամուտների դեպքում 1985թ. կիրառվող միջին 51 տոկոս դրույքաչափը 2003թ. նվազել է մինչև 28 տոկոս (Lora և

2. Որոշ տնտեսագետներ սպառողական հարկը դասում են ուղղակի հարկերի թվին: Այնուամենայնիվ, սպառողական հարկն ունի նույն հատկանիշները, ինչ ԱԱՀ-ն, միայն այն տարբերությամբ, որ այն գանձվում է արժեքային շղթայի վերջում՝ սպառողի կողմից, այն դեպքում, երբ ԱԱՀ-ն գանձվում է արժեքային շղթայի յուրաքանչյուր փուլում:

Cardenas 2006, հղումը Bird-ի, 2009): Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀՀԿ) անդամ ամենազարգացած երկրներում եկամտային հարկի դրույքաչափերը պրոգրեսիվ են և բարձր: Deloitte-ի (2017) զեկույցի համաձայն Ճապոնիայում եկամտային հարկի դրույքաչափերը պրոգրեսիվ են (5%-45%) և հարկման բազա է հանդիսանում ամբողջ, այդ թվում՝ Ճապոնիայից դուրս ստացված եկամուտը:

XIX դարում աշխարհի գրեթե բոլոր երկրներում գործում էր եկամտահարկի համահարթ դրույքների համակարգ: Հունգարիայում պրոգրեսիվությունը հարկային համակարգ մտավ 1909թ. Sandor Wekerle-ի նախաձեռնած փոփոխությունների ժամանակ, որոնք ուժի մեջ մտան միայն 1922թ. (Ambrus 2012): 2012թ. Ambrus-ն արձանագրել է, որ զարգացած երկրներն ունեն պրոգրեսիվ հարկային համակարգ: Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ) պրոգրեսիվ և համահարթ հարկային դրույքաչափերի վերաբերյալ մի քանի հետազոտություն է կատարել: Երբ դարասկզբին մի շարք երկրներ անցում կատարեցին համահարթ դրույքաչափի ԱՄՀ մասնագետները նկատեցին (Keen, Kim, and Varsano 2006), որ այս արմատական փոփոխության հետ կապված քննարկումներն ավելի շատ կենտրոնանում են հավաստիացումների և հոշտորաբանական հնարքների, քան վերլուծությունների և փաստերի վրա: Նրանց կարծիքով հիմնական հարցն այն չէ, թե, արդյո՞ք, ավելի շատ երկրներ կանցնեն համահարթ հարկի, այլ այն, թե, արդյո՞ք, համահարթ հարկի անցած երկրները կիրաժարվեն դրանից: ԱՄՀ այլ մասնագետներ (Norregaard and Khan 2007) արձանագրել էին ԱՄՀ լայն տարածում և ուղղակի հարկերի, տուրքերի և աշխատուժի վրա տարածվող հարկային սեպի (tax wedge, որը համախառն եկամտի և հարկերի վճարումից հետո առձեռն ստացվող եկամտի տարբերությունն է) դրույքաչափերի կրճատում: Միաժամանակ կանխատեսել են, որ դրույքաչափերի նվազեցումը և նոր երկրների կողմից համահարթ դրույքի ընդունումը շարունակվելու է: Հաշվի առնելով եկամուտների կարիքը՝ Norregaard և Khan-ի կարծիքով գլխավոր հարցն այն էր, թե՞ ղրն է դրույքաչափերի հավասարակշռված մակարդակը: Norregaard և Khan-ը նաև կարծում էին, որ ավելի շատ երկրների կողմից ընդունվելուց հետո համահարթ դրույքաչափը կկորցնի իր դրական ազդեցությունը նոր երկրների համար, իսկ ուսումնասիրության պահին (2007թ.) առկա տնտեսության աշխուժության նվազումը կհանգեցնի հարկաբյուջետային դժվարությունների՝ ստիպելով հրաժարվել համահարթ համակարգից:

2017թ. հոկտեմբերի հրապարակման մեջ ԱՄՀ-ն (IMF 2017) կարծիք էր հայտնում, որ մեծահարուստները չեն վճարում հարկերի իրենց արդար բաժինը և արձանագրում, որ XX դարի 80-ական թվականներին ԱՄՆ-ում մեծ եկամուտներ ունեցող հարկատուների վրա տարածվող դրույքների նվազեցումը նպաստեց հարկի պրոգրեսիվության անկմանը: ԱՄՀ-ն այս միտումը դիտարկում է որպես ԱՄՆ-ում և բարձր եկամուտ ունեցող այլ երկրներում եկամուտների անհավասարությանը նպաստող էական գործոն, ինչը ՏՀՀԿ անդամ երկրներում եկամտային հարկի դրույքները 1981թ. 62%-ից 35%-ի նվազեցնելու հետևանք է: 1990-ականների հարկային բարեփոխումներն ուղեկցվում էին չհարկվող շեմի բարձրացումով, ինչի արդյունքում հարկային բեռի հիմնական կրող էր դառնում հասարակության միջին խավը: ԱՄՀ-ն կարծիք էր

հայտնել, որ «չափազանց մեծ անհավասարությունը կարող է քայքայել սոցիալական համերաշխությունը, հանգեցնել քաղաքական բևեռացման և, վերջին հաշվով, նվազեցնել տնտեսական աճի տեմպը»:

Դրույքաչափերի նվազման միտումը դիտարկելով որպես տնտեսական աճի վրա պրոգրեսիվ դրույքաչափերի հնարավոր բացասական ազդեցության հետ կապված մտահոգություն՝ ԱՄՀ հրապարակումը (IMF 2017) բարձրացնում էր պրոգրեսիվ հարկման համակարգում շեմերի կտրուկ բարձրացման հարցը: Միաժամանակ արձանագրում է, որ օպտիմալ հարկերի տեսության համաձայն ներկայումս գործող դրույքաչափերի սահմանային մեծությունները պետք է ավելի բարձր լինեին, այնինչ առերեսվում ենք նվազման միտման հետ: Հարկային դրույքների պրոգրեսիվության ցածր մակարդակ ունեցող զարգացած տնտեսությունները կարող են բարձրացնել բարձր եկամուտներ ունեցող հարկատուների դեպքում կիրառվող դրույքաչափը առանց տնտեսական աճի համար խնդիրներ առաջացնելու:

Համահարթ հարկը ներդրած մի շարք երկրներ առերեսվել են եկամուտների անկման և հարկաբյուջետային անհավասարակշռությունների առաջացման հետ կապված խնդիրների հետ: 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամը Լատվիայում հանգեցրեց եկամուտների կտրուկ նվազման: 2009թ. նոյեմբերին ԱՄՀ-ն Լատվիային առաջարկեց հրաժարվել հարկերի համահարթ համակարգից (Ambrus 2012): Չնայած Լեհաստանը նույնպես նման առաջարկ ստացավ, սակայն հրաժարվեց անցում կատարել պրոգրեսիվ հարկման համակարգի: Ռումինիան, որը համահարթ հարկին անցում էր կատարել 2005թ., տնտեսական ճգնաժամի և անբավարար եկամուտների պատճառով 2010թ. ստիպված էր ԱՄՀ-ից 20 մլրդ եվրոյի օգնություն խնդրել և հարկային քաղաքականության արմատական փոփոխության շուրջ քննարկումներ սկսել, որոնց հիմնական տարրերից մեկը եկամուտների և շահույթի պրոգրեսիվ հարկմանը վերադառնալն էր (Tax Justice Network 2010):

ՏՀԶԿ անդամ երկրների 1982-2009թթ. տվյալներն օգտագործելով՝ Attinasi-ն, Checherita-Westphal-ը և Rieth-ը (2011) եզրակացրել են, որ այլ հավասար պայմաններում, եկամտային հարկի ավելի պրոգրեսիվ համակարգ ունեցող երկրներն ունեցել են ավելի հզոր ավտոմատ կայունարարներ³ (automatic stabilizers), որը տնտեսական անկումների ժամանակաշրջաններում հանդիսանում է դրանց դեմ պաշտպանության առաջին միջոցը:

Այս բաժնի հետագա մասերում ներկայացվում են եկամուտների և շահույթների պրոգրեսիվ և համահարթ հարկման, դրույքաչափերի նվազեցման միջոցով հավաքագրվող հարկերի մեծությունն ավելացնելու (Լաֆֆերի կոր), այլ վճարների և արևմտյան երկրներում հավաքագրվող հարկերի կառուցվածքի հետ կապված հարցերը:

3. Ավտոմատ կայունարարները տնտեսական քաղաքականության այն գործիքներն են, որոնք թույլ են տալիս առանց կառավարության միջամտության չեզոքացնել տնտեսական ակտիվության վայրիվերումների հետևանքները: Ամենահայտնի ավտոմատ կայունարարները եկամտահարկն ու շահութահարկն են, ինչպես նաև գործազրկության և սոցիալական պաշտպանության նպաստները:

2.1. Եկամուտների և շահույթների պրոգրեսիվ և համահարթ հարկում

Վերջին 25 տարում եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափից համահարթի անցման գործընթաց սկսվեց մի շարք երկրներում, այդ թվում՝ Էստոնիայում և Լիտվայում՝ 1994թ., Լատվիայում՝ 1995թ., Ռուսաստանում՝ 2001թ., Սերբիայում՝ 2003թ., Սլովակիայում և Ուկրաինայում՝ 2004թ., Ռումինիայում և Վրաստանում՝ 2005թ. և Չեխիայում՝ 2007թ.: Էստոնիայում, Սլովակիայում, Ռումինիայում և Սերբիայում շահութահարկի դրույքը հավասար է եկամտահարկի դրույքին:

Հյուսիսային Մակեդոնիան, որը մինչև 2019թ. կոչվում էր նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետություն, համահարթ հարկման անցավ 2007թ., ինչի արդյունքում եկամտային հարկը նախկին 15%, 18% և 24% դրույքաչափերի փոխարեն նվազեցվեց մինչև միասնական 12%-ի, իսկ շահութահարկը՝ 15%-ից 12%-ի: 2008թ. վերը նշված երկու հարկատեսակների դրույքաչափերը նվազեցվեցին մինչև 10%-ի:

	Համահարթ	Պրոգրեսիվ
Էստոնիա (26%)	1994	
Լիտվա (33%)	1994	
Լատվիա 25 (%)	1995	2018
Ռուսաստան (13%)	2001	
Սերբիա (14%)	2003	
Սլովակիա (19%)	2004	2013
Ուկրաինա (13%)	2004	
Վրաստան (12%)	2005	
Ռումինիա (16%)	2005	
Չեխիայի Հանրապետություն (23%) ⁴	2007	2013
Մոնտենեգրո (15%)	2007	2013
Մակեդոնիա (12%)	2007	2019
Ալբանիա (10%)	2007	

Չեխիայի Հանրապետությունում 2007թ. իրականացված հարկային և սոցիալական բարեկեցության համակարգերում կատարվող փոփոխությունների ուսումնասիրության արդյունքում Dalsgaard-ը (2008) եզրակացրել է, որ չնայած դրանք կարճաժամկետ հատվածում բարելավում են հարկաբյուջետային քաղաքականությունը, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում չեն նվազեցնում բյուջեի ճեղքվածքը և կարող են ավելացնել հարկաբյուջետային քաղաքականության վրա առկա ճնշումը: Dalsgaard-ը նաև արձանագրել էր, որ համահարթ դրույքաչափի անցումը հիմնական


4. Չեխական մոդելը ներառում էր 15% համահարթ եկամտային հարկ, սակայն քանի որ այն հաշվարկվում էր համախառն եկամտի և գործատուի կողմից վճարվող սոցիալական ապահովության վճարների նկատմամբ, արդյունավետ դրույքաչափը 23% է: Իրական կյանքում, սակայն կան մի քանի արդյունավետ դրույքաչափեր, որոնք գոյանում են հարկային կրեդիտների, սոցիալական ապահովության վճարների և կարիքից բխող սոցիալական արտոնությունների պատճառով:

նում ուղեկցվել է ամենափոքր և ամենամեծ եկամուտներ ունեցող հարկատուներից գանձվող հարկերի և հարկման բազայի կրճատմամբ: Լաֆֆերի կորով բացատրվող հարկային եկամուտների աճ տեղի չէր ունեցել: 2013թ. Չեխիայի Հանրապետությունը վերադարձավ պրոգրեսիվ հարկի:

Հյուսիսային Մակեդոնիայի ֆինանսների նախարարի խոսքով (Tevdovski 2019), որը հնչել է 2019թ. փետրվարի 12-ին Երևանում կայացած «Հարկային համակարգ, արդարություն և տնտեսական զարգացում» միջազգային գիտաժողովի ժամանակ, եկամտահարկի պրոգրեսիվ մեխանիզմից համահարթ դրույքաչափի անցումը որևէ ազդեցություն չունեցավ տնտեսության ստվերայնության մակարդակի վրա, որը տատանվում էր ՀՆԱ 30%-ի շրջակայքում, չօգնեց օտարերկրյա ուղղակի ներդրումներ ներգրավելուն, որոնք իրականում անկում ապրեցին, չօգնեց խթանել տնտեսական աճը, իրականում ՀՆԱ աճի տեմպերն ընկան: Հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում եկամտային հարկի գծով պետական բյուջեի մուտքերը նվազեցին ՀՆԱ 0.5%-ի չափով (ՀՆԱ 2.7 %-ից մինչև 2.2%), իսկ պետական բյուջեի եկամուտները ՀՆԱ 33.4%-ից նվազեցին մինչև ՀՆԱ 29.5%-ի (ամենացածրներից մեկը Եվրոպայում): Բարձր եկամուտ ունեցող քաղաքացիների 1%-ին 2010թ. բաժին էր հասնում եկամուտների 12.2%-ը՝ 2006թ. 6.3%-ի համեմատ: Հարկաբյուջետային քաղաքականության բնագավառում առաջացած խնդիրները Հյուսիսային Մակեդոնիայի կառավարությանը ստիպեցին 2019թ. վերադառնալ պրոգրեսիվ հարկման: Հիմնական դրույքը մնաց 10%-ի մակարդակում, սակայն ամենաբարձր եկամուտներ ունեցող հարկատուների համար ներմուծվեց 18% դրույքաչափ, ընդլայնվեց հարկման բազան (ներառելով նաև տոկոսային եկամուտները), կրճատվեցին նվազեցումները և կատարվեցին այլ փոփոխություններ: Կապիտալից ստացվող եկամուտների՝ շահաբաժինների, կապիտալ շահույթի և վարձակալական եկամուտների հարկման դրույքաչափը 10%-ի փոխարեն սահմանվեց 15%:

Սլովակիայի հարկային համակարգի փոփոխության նպատակներից մեկը հարկային բեռի նվազեցումն էր: Հարկային դրույքաչափերը նվազեցնելու գործընթացում սողանքները փակելու գործում Սլովակիայի Հանրապետությունը ամենաշատն է հաջողել: Ներդրման առաջին տարում եկամտային հարկից ստացվող եկամուտները նվազեցին ՀՆԱ 0.8%-ով, ՀՆԱ 3.3%-ից իջնելով 2.5%-ի (գծապատկեր 1), ապա 2005թ. մի փոքր ավելացել են մինչև ՀՆԱ 2.7%՝ հիմնականում ինքնազբաղ անձանց ներառելու (Gray, Lane և Varoudakis 2007) միջոցով:

Գծապատկեր 1. Եկամտային հարկի գծով եկամուտները





Աղբյուր՝ Gray, Lane և Varoudakis 2007



Սլովակիայի ֆինանսների նախարարության ներկայացուցչի տվյալներով (Marciniciu 2019) 2004թ. Սլովակիան անցավ 19%-19%-19% համահարթ հարկման, երբ միննույն դրույքաչափն էր կիրառվում շահութահարկի, եկամտային հարկի և ԱԱՀ դեպքում: 2000-2008թթ. ՀՆԱ աճը չէր ուղեկցվում բյուջեի եկամուտների աճով և 2007-2008թթ. մնում էր նույն 34.4-34.5%-ի մակարդակում: Եկամտահարկի հավաքագրումների 70%-ն ուղղվում էր տեղական ինքնակառավարման մարմինների, 30%-ը՝ տարածաշրջանների բյուջե: Հարկային եկամուտներ - սոցիալական վճարներ հարաբերությունը 1995թ. 1.9-ից 2017թ. իջավ մինչև 1.3, ինչը նշանակում է, որ սոցիալական վճարները ծանր բեռ են աշխատողների համար: Marciniciu-ի կարծիքով համահարթ դրույքաչափի անցումը չի անդրադարձել հարկերի կառուցվածքի, հարկման բազայի, վարչարարության, հարկերից խուսափելու հետ կապված առանցքային խնդիրների լուծմանը, նվազեցրել է այնպիսի խոցելի խմբերի եկամուտները, ինչպիսիք են միայնակ մայրերը, չի հանգեցրել օտարերկրյա ուղղակի ներդրումների կամ հարկային եկամուտների ավելացման: Միաժամանակ պարզ չէ, թե ինչո՞ւ պետք է եկամտային հարկի, շահութահարկի և ԱԱՀ դրույքաչափերը լինեն նույնը:

Եկամտային հարկի համահարթ դրույքաչափի անցնելիս Լիտվան կիրառել է ամենաբարձր եկամուտների դեպքում կիրառվող 33% դրույքաչափը, ինչի արդյունքում եկամուտներն աճեցին (Keen, Kim և Varsano 2006): Ուկրաինայի իշխանությունները ակնկալում էին, որ եկամտային հարկի գծով եկամուտները փոփոխությունների առաջին տարում՝ 2004թ. կնվազեն ՀՆԱ 0.5%-ի չափով, բայց ամբողջությամբ կվերականգնվեն 2005թ.: Եկամտային հարկի եկամուտները զգալիորեն ավելի՝ ՀՆԱ 1.3%-ի չափով նվազեցին առաջին տարում, էականորեն ավելացան մինչև ՀՆԱ 4.1%-ը 2005թ., սակայն մնացին ավելի ցածր մակարդակում, քան մինչև փոփոխություններն էին (Gray, Lane և Varoudakis 2007):

Գերմանիայի Հյուսիսային Հռենոս-Վեսթֆալիա երկրամասի ֆինանսների նախկին նախարարի տվյալներով (Walter-Borjans 2019) եկամտահարկը և սոցիալական ապահովության վճարները էականորեն բարելավում են հարկերի պրոգրեսիվությունը (գծապատկեր 2): Առանց եկամտահարկի և սոցիալական ապահովության վճարների համակարգը խիստ ռեգրեսիվ է և ավելի քիչ եկամուտ ունեցող ընտանիքներն իրենց եկամուտների ավելի մեծ մասն են վճարում հարկերի տեսքով: Եկամտային հարկը զգալիորեն բարելավում է պատկերը և ավելացնում ավելի բարձր եկամուտ ունեցող հարկատուների կողմից վճարվող հարկերի տեսակարար կշիռը:

Գծապատկեր 2. Հարկերի ազդեցությունը տնային տնտեսությունների եկամուտների վրա





Միայն սոցիալական վճարները ներմուծելու դեպքում (առանց եկամտահարկի) որպես եկամտի տոկոս տնային տնտեսությունների կողմից վճարվող հարկերը հարթվում են: Համեմատաբար փոքր է միայն ամենաբարձր եկամուտ ունեցող հարկատուների կողմից վճարվող հարկերի տեսակարար կշիռը: Եվ սոցիալական վճարները և եկամտահարկը հաշվի առնելու դեպքում հարկումն ունի պրոգրեսիվ բնույթ և հարթվում է միայն վերջում, ամենաբարձր եկամուտներ ունեցող հարկատուների վճարած հարկերը ներառելու դեպքում:

Գերմանական օրինակը ցույց է տալիս պրոգրեսիվ հարկային համակարգի կարևորությունն ինչպես սոցիալական արդարության, այնպես էլ բյուջեի եկամուտների բարձր մակարդակ ունենալու տեսակետից:

2.2 Լաֆֆերի կորը

Հարկի դրույքաչափը իջեցնելու միջոցով հավաքագրվող հարկերի ծավալի օպտիմալ մակարդակին հասնելու, տնտեսական ակտիվությունը խթանելու և հավաքագրվող հարկի գումարն ավելացնելու տեսակետը հիմնվում է Լաֆֆերի կորից բխող հետևությունների վրա:


1980-ական թվականների սկզբում տնտեսագետների մի խումբ ձևավորեց առաջարկի տնտեսության տեսությունը, որի կողմնակիցների կարծիքով կարելի է հարկերի կրճատման միջոցով խթանել տնտեսական աճը: Առաջարկի տնտեսության տեսության կողմնակիցների կարծիքով հարկերի բարձր դրույքաչափերը մարդկանց ստիպում են նվազեցնել կապիտալի և աշխատուժի առաջարկը, դրանով նվազեցնելով հարկային բազան, քանի որ նվազեցնում են տնտեսական ակտիվությունը: Այս տեսակետը ներկայացվում է Լաֆֆերի կորի⁵ տեսքով: Հարկերի կրճատման միջոցով տնտեսության խթանման փորձերն առանցքային դարձան 1980-ականներին, Ռեյգանի և Թետչերի վարչակազմերի օրոք: Տնտեսագետների մեկ այլ խումբ պնդում է, որ առաջարկի տնտեսության տեսության առաջ քաշած պնդումները չեն հաստատվել իրա-

5. Մամուլի համաձայն, Արթուր Լաֆֆերն այդ կորը գծել է Վաշինգտոնի ռեստորաններից մեկում 1974թ.: Blinder-ը (1981) պնդում է, որ Ժյուլ Դյուպուին որոշակի հարկային առավելագույն դրույքի առկայության գաղափարը առաջ է քաշել դեռ 1844թ., իսկ դրանից առաջ Էդմունդ Բուրկեն այդ գաղափարը ձևակերպել էր Անգլիայի խորհրդարանում 1774թ.:

կան կյանքում, քանի որ հարկերի դրույքաչափերի նվազեցումները հավաքագրվող հարկերի ավելացման փոխարեն, հանգեցրել են դրանց կրճատման⁶:

Լաֆֆերի կորի առավելագույն արժեքի ստացման խնդիրը մաթեմատիկական լուծում է ստացել Ռոլլի թեորեմի ապացուցման միջոցով (գծապատկեր 3): Ռոլլի թեորեմի համաձայն, եթե $[a, b]$ հատվածի վրա (գծապատկեր 4-ում այն ներկայացված է $[0, t]$ հատված) որոշված $f(x)$ իրական ֆունկցիան անընդհատ է այդ հատվածի վրա, $f(a)=f(b)$ (Լաֆֆերի կորի վրա $f(0)=f(t)$), և ածանցելի է $(0, t)$ միջակայքում, այդ դեպքում $(0, t)$ միջակայքում գոյություն ունի մի այնպիսի c կետ, որ $f'(c)=0$ (Լաֆֆերի կորի վրա $f'(t^*)=0$): Թեորեմը Միշել Ռոլլն ապացուցել է 1691 թ.:

Գծապատկեր 3. Ռոլլի թեորեմի ապացուցման գրաֆիկական պատկերը



© 2012 Encyclopædia Britannica, Inc.

Աղբյուր՝ <https://www.britannica.com/science/Rolles-theorem>:

Լաֆֆերի կորը հիմնվում է այն տեսակետի վրա, որ հարկի դրույքաչափի (t) ավելացմանը զուգահեռ այդ հարկի գծով հավաքագրվող եկամուտներն ավելանում են մինչև որոշակի $G(t)$ մակարդակ, որից հետո եկամուտներն սկսում են նվազել (գծապատկեր 4): Հարկատուներն այլևս շահագրգռված չեն լինում ավելացնել իրենց կողմից առաջարկվող կապիտալն ու աշխատուժը, քանի որ, իրենց կարծիքով, հարկերը վճարելուց հետո իրենք բավարար հատուցում չեն ստանում: Լաֆֆերի կորի օգնությամբ կարելի է նկարագրել բոլոր հարկերի հնարավոր վարքագիծը, սակայն այն ավելի հեշտ է պատկերացնել ուղղակի հարկերի դեպքում, քանի որ անուղղակի հարկերի դրույքաչափերը կարող են գերազանցել ապրանքի գնի 100 տոկոսը⁷: Ուղղակի հարկերի դեպքում հարկային դրույքաչափերը կարող են կազմել եկամուտների կամ շահույթի 80 կամ 90 տոկոսը, սակայն 100 տոկոսը կնշանակի ամբողջ եկամտի կամ շահույթի գանձում հարկի տեսքով⁸: Հարկային դրույքաչափերի կրճատումը դրական


6. Samuelson, Paul, A. and Nordhaus, William, D. (2010). Economics. Nineteenth Edition. McGraw-Hill Irwin. https://www.academia.edu/33624679/Economics_19th_Ed._Paul_Samuelson_William_Nordhaus.pdf

7. Օրինակ, ակցիզային հարկի մեծությունը կարող է կազմել ապրանքի գնի 150 կամ 200 տոկոսը:

8. Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում ԱՄՆ կառավարությունը լրացուցիչ հարկի դրույքաչափը

ազդեցություն կունենա բյուջետային եկամուտների մեծության վրա, եթե դրույքաչափը գտնվում է հորիզոնական առանցքի t^* կետից աջ:

Գծապատկեր 4. Լաֆֆերի կորը



Եթե հարկի դրույքաչափը t^* -ից փոքր է, կամ հորիզոնական առանցքի վրա գտնվում է t^* -ից ձախ՝ t_{2019} կետում, ապա հարկի դրույքաչափի իջեցումը մինչև t_{2020} մակարդակ կհանգեցնի բյուջեի եկամուտների կրճատման, 2019թ. G_{2019} մակարդակից մինչև 2020թ. G_{2020} մակարդակ:

Իհարկե, սա տեսական դատողություն է:

Սակայն առավել քան տեսական են ՀՀ ֆինանսների նախարարության մրցունակության բարելավման, ներդրումների ներգրավման և մնացած հարցերի վերաբերյալ դատողությունները:

2.3 Այլ վճարներ

2016թ. ուժը կորցրած ճանաչվեց «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքը⁹: Գործատուներն ու աշխատակիցները դադարեցին

բարձրացրել է մինչև 90%: Համաձայն Samuelson-ի և Nordhaus-ի (2010) ԱՄՆ նախկին նախագահ Ռեյգանը իր առաջին վարչակազմի բյուջեի տնօրեն Դեվիդ Ստոքմենին պատմել է, որ պատերազմի տարիներին զբաղվում էր լուսանկարչությամբ և օրական չորս լուսանկար կատարելով կարելի էր ստանալ եկամուտ, որ ենթակա էր հարկման առավելագույն դրույքաչափով: «Այդ պատճառով, ընդամենը չորս լուսանկար անելուց հետո մենք ավարտում էինք աշխատանքը և հանգիստ գնում էինք քաղաքից դուրս»: Սեփական փորձը Ռեյգանին համոզել էր, որ հարկի բարձր դրույքաչափը հանգեցնում էր աշխատուժի առաջարկի կրճատման: 1980-ականներին Շվեդիայում հարկային առավելագույն դրույքաչափը կազմում էր 80%:

9. ՀՕ-179, ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 26-ին: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելով ուժը կորցրած է ճանաչվել «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի հետ միաժամանակ (ՀՕ-183, ընդունվել է 1997թ. դեկտեմբերի 27-ին) շատ խառն է գրված:

սոցիալական ապահովության վճարներ կատարել: Արևմտյան մի շարք երկրներում, բացի եկամուտից վճարվող հարկերը, աշխատակիցներն ու գործատուները վճարում են նաև սոցիալական ապահովության վճարներ: Գերմանիայում սոցիալական ապահովության վճարները կազմում են աշխատակցի աշխատավարձի մոտավորապես 21.4%-ը:

Աղյուսակ 1. Սոցիալական ապահովության վճարների մեծությունը Գերմանիայում¹⁰ (որպես համախառն աշխատավարձի տոկոս)

Սոցիալական ապահովության վճարների բաղադրիչները ¹¹	Աշխատակից	Գործատու	Ընդամենը
Կենսաթոշակային ապահովագրություն	9.3%	9.3%	18.6%
Առողջության ապահովագրություն ¹²	7.3%	7.3%	14.6%
Գործազրկության ապահովագրություն ¹³	1.25%	1.25%	2.5%
Բուժքույրական խնամքի ապահովագրություն ¹⁴	1.525% ¹⁵	1.525%	3.05%
Պատահարներից ապահովագրություն	-	1.16% ¹⁶	1.16%
Ընդամենը	19.375%	20.535%	39.91%

Բոլոր բաղադրիչների գծով հավաքված գումարները կուտակվում են մեկ հիմնադրամում: Աշխատակիցը կարող է ընտրել առողջության ապահովագրական ծառայություններ մատակարարող ընկերությունը: 2019թ. մինչև 60,750 համախառն աշխատավարձ ստացող աշխատակիցները պարտադիր կերպով ապահովագրվում են առողջապահության պետական ապահովագրություն տրամադրողներից մեկի կողմից (Gesetzliche Krankenversicherung, GKV): Այն աշխատակիցները, ում եկամուտները գերազանցում են 60,750 եվրոն, կարող են օգտվել պետական կամ մասնավոր ապահովագրողների ծառայություններից (Privat Krankenversicherung, PKV):

Հարկատուները հնարավորություն ունեն նաև ստանալ մինչև 18 տարեկան երեխաների խնամքի համար նախատեսված նպաստ (մինչև 25 տարեկան¹⁷, եթե երեխան

10. Աղբյուր <https://www.gtai.de/GTAI/Navigation/EN/Invest/Investment-guide/Employees-and-social-security/the-german-social-security-system.html?view=renderPdf>

11. Գումարած փոքր հատկացումներ

12. Գումարած լրացուցիչ վճարը, որ առողջության ապահովագրության յուրաքանչյուր ընկերություն կարող է հավասար չափերով գանձել գործատուից և աշխատակցից: 2019թ. համար Դաշնային Առողջապահության նախարարությունը լրացուցիչ վճարի միջին մեծությունը սահմանել է 0.9%, որը հավասարաչափ բաշխվում է գործատուի և աշխատակցի միջև: Գերմանիայի առողջություն ապահովագրող հիմնադրամների ազգային ասոցիացիան (German National Association of Statutory Health Insurance Funds - GKV-Spitzenverband) առցանց տրամադրում է առողջության ապահովագրություն տրամադրող պետական կազմակերպությունների և նրանց կողմից գանձվող լրացուցիչ վճարների մեծության դրույքաչափերը:

13. Գործազրկության ապահովագրության գումարները հավաքագրվում են առողջության ապահովագրության ընկերության կողմից, որի ծառայություններից օգտվում է աշխատակիցը, որն իր հերթին գումարը փոխանցում է Աշխատանքի դաշնային գործակալությանը (Bundesagentur für Arbeit):

14. Nursing care insurance

15. Բուժքույրական խնամքի ապահովագրական վճարները առողջության ապահովագրության ընկերության միջոցով փոխանցվում են բուժքույրական խնամքի ապահովագրության ընկերությանը: Երեխա չունեցող 23 տարեկանից մեծ աշխատակիցները վճարում են լրացուցիչ 0.25% : Սաքսոնիայի երկրամասում գործում է հատուկ կարգավորում:

16. Պատահարի միջին ապահովագրական վճար, որը 2017թ. սահմանվել է Պատահարներից սոցիալական ապահովագրության գերմանական (German Social Accident Insurance - DGUV) կառույցը:


17. Kindergeld Աղբյուր <https://www.kindergeld.org/>

դեռ սովորում է). (1) ամսական 204 եվրո՝ առաջին երկու երեխայի համար, (2) ամսական 210 եվրո՝ երրորդ երեխայի համար, (3) ամսական 235 եվրո՝ յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար:

2.4 Արևմտյան երկրների հարկերի կառուցվածքը

ՏՀԶԿ անդամ երկրների զգալի մասի եկամուտներում գերիշխում են ուղղակի հարկերը: 2017թ. եկամտահարկի և շահութահարկի տեսքով (գծապատկեր 5) Դանիայում գանձել են ընդհանուր հարկերի 59%-ը, ԱՄՆ-ում՝ 48%-ը, Շվեյցարիայում՝ 42%-ը, Նորվեգիայում՝ 38%-ը, Բելգիայում և Շվեդիայում՝ 36%-ը, Գերմանիայում՝ 32%-ը, Իտալիայում և Ճապոնիայում՝ 31%-ը, Պորտուգալիայում՝ 29%-ը, Ավստրիայում և Իսպանիայում՝ 28%-ը, Հոլանդիայում՝ 27%-ը, Ֆրանսիայում՝ 23%-ը, Չեխիայում՝ 22%-ը, Լեհաստանում, Սլովակիայում և Հունաստանում՝ 21%-ը, Հունգարիայում՝ 19%-ը: ՏՀԶԿ անդամ երկրների միջին ցուցանիշը եղել է 33%:

Գծապատկեր 5. ՏՀԶԿ անդամ եվրոպական մի շարք երկրներում հարկային եկամուտների կառուցվածքը (որպես ընդհանուր հարկերի տոկոս)



Աղբյուր՝ ՏՀԶԿ

2017թ. Պորտուգալիայում անուղղակի հարկերի գծով եկամուտները կազմել են ընդհանուր եկամուտների 40%-ը (այդ թվում՝ ԱԱՀ-ն 25%), Հունգարիայում՝ 42%-ը (24%-ը), Չեխիայում և Նորվեգիայում համապատասխանաբար՝ 33%-ը և 31%-ը (22%-ը), Լեհաստանում, Սլովակիայում, Հունաստանում և Շվեդիայում՝ 36%-ը և 33%-ը, 40%-ը և 28%-ը (21%-ը), Դանիայում՝ 32%-ը (20%-ը), Գերմանիայում և Իսպանիայում՝ 27%-ը և 29%-ը (19%-ը), Հոլանդիայում և Ավստրիայում՝ 30%-ը և 28%-ը (18%-ը), Ֆրանսիայում


և Բելգիայում՝ 24%-ը և 25%-ը (15%-ը), Իտալիայում՝ 28%-ը (14%-ը), Շվեյցարիայում՝ 21%-ը (12%-ը), Ճապոնիայում՝ 20%-ը (13%-ը), ԱՄՆ-ում՝ 17%-ը (0%-ը): ՏՀԶԿ անդամ երկրների միջին ցուցանիշը եղել է 33% (20%):

ՏՀԶԿ անդամ երկրների կառավարությունների եկամուտներում մեծ տեսակարար կշիռ են կազմում սոցիալական ապահովագրության վճարները (միջին հաշվով եկամուտների 26%-ը), այդ թվում Չեխիայում և Սլովակիայում՝ 43%-ը, Գերմանիայում, Լեհաստանում և Հոլանդիայում՝ 38%-ը, Ֆրանսիայում՝ 37%-ը, Ավստրիայում՝ 35%-ը, Իսպանիայում՝ 34%-ը, Հունգարիայում՝ 33%-ը, Բելգիայում՝ 31%-ը, Իտալիայում՝ 30%-ը, Հունաստանում՝ 29%-ը, Նորվեգիայում՝ 27%-ը, Շվեդիայում՝ 23%-ը, Պորտուգալիայում՝ 27%-ը, Շվեյցարիայում՝ 24%-ը, Դանիայում՝ 0%-ը:

3. ՀՀ տնտեսության ընդհանուր բնութագիրը

1995թ. ի վեր ՀՀ տնտեսությունն աճել է 10.5 անգամ: ՀՆԱ-ն 522 միլիարդ դրամից 2017թ. հասել է 5,569 միլիարդի (գծապատկեր 6), կամ մեկ շնչի հաշվով մոտավորապես¹⁸ 1,869 հազար դրամ կամ 3,872 ԱՄՆ դոլար: Նույն ժամանակահատվածում Էստոնիայի տնտեսությունն աճել է 8.5 անգամ (մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2017թ.՝ 23,275 եվրո), Լատվիայինը՝ 6.7 (20,128 եվրո), Հունգարիայինը՝ 6.6 (19,739 եվրո), Լիտվայինը և Իռլանդիայինը՝ 5.4 (համապատասխանաբար 22,672 եվրո և 43,701 եվրո), Լեհաստանինը՝ 5.8 (20,107 եվրո) անգամ: ՀՀ տնտեսության տպավորիչ աճը սահուն չի եղել և ուղեկցվել է վայրկյանային երկու ու նոր ձևավորվող արդյունքի անհավասար բաշխմամբ:

Գծապատկեր 6. Հայաստանի համախառն ներքին արդյունքը




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

18. 2018թ. տվյալները նախնական են:

Բնակչության եկամուտների կենտրոնացումը բնութագրող Զինի ինդեքսը¹⁹ 2008թ. 0.339-ից 2017թ. հասել է 0.359-ի (գծապատկեր 7):

Գծապատկեր 7. Զինի ինդեքսի փոփոխությունները 2008-2017թթ.



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2008թ.-ից ի վեր ՀՀ տնտեսությունում ներդրումները նվազում են: Մասնավոր ներդրումները 2008թ. ՀՆԱ 36%-ի համեմատ 2017թ. նվազել են մինչև ՀՆԱ 17%, իսկ պետական ներդրումները՝ ՀՆԱ 5%-ց մինչև 2%: Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2008թ. 930 մլն դոլարից (մոտավորապես ՀՆԱ 8%) նվազել են՝ 2017թ. հասնելով 230 մլն դոլար (ՀՆԱ 2%):

Հետագա մասերում ներկայացվում են ՀՀ հարկային գործող համակարգի հիմնական ցուցանիշները և առաջարկվող փոփոխությունները:

3.1 ՀՀ հարկային համակարգի նկարագիրը


ՀՀ-ում գործել են կամ գործում են հետևյալ հիմնական հարկատեսակները, տուրքերն ու սոցիալական վճարները.

Ուղղակի հարկեր	Անուղղակի հարկեր	Տուրքեր և վճարներ
➤ Շահութահարկը	➤ ԱԱՀ-ն	➤ Մաքսատուրքերը
➤ Եկամտային հարկը ²⁰	➤ Ակցիզային հարկը	➤ Սոցիալական վճարները

Եկամտային հարկի մասին ՀՀ օրենքի ընդունումից (ՀՕ-246, ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 22-ին) և 2013թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտնելուց հետո եկամտային հարկը դարձել է պետական բյուջեի եկամուտների կարևորագույն աղբյուրներից մեկը: Եկամտային հարկի գծով պետական բյուջեի եկամուտները 2013թ. 251 մլրդ դրամից 2017թ. հասել է 342 մլրդ դրամի կամ եկամուտների 24.6 տոկոսից 28.8 տոկոսի (գծապատկեր 8):


19. Եկամուտների հավասարաչափ բաշխման դեպքում Զինի ինդեքսը հավասար է զրոյի, իսկ բացարձակ անհավասարության պայմաններում այն հավասար է մեկի:

20. Մինչև 2013թ. եկամտահարկ


Գծապատկեր 8. Եկամտային հարկի բացարձակ և հարաբերական մեծությունները

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Եկամտային հարկը հարկերի և տուրքերի թվում մեծությամբ երկրորդն է (գծապատկեր 9 և 10): Եթե եկամտային հարկի տեսակարար կշիռը պետական բյուջեի հարկերում և տուրքերում ու որպես ՀՆԱ տոկոս աճում է, ապա ԱԱՀ-ինը՝ նվազում է և 2013թ. ՀՆԱ 8.8%-ից 2017թ. հասել է ՀՆԱ 7.3%-ի, կամ հարկերի և տուրքերի 39.3%-ից՝ 34.3%-ի:

Գծապատկեր 9. Հայաստանում հավաքագրվող եկամուտները (մլրդ դրամ)

Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե


Գծապատկեր 10. Հավաքագրվող եկամուտների տեսակարար կշիռները (%)

ԱԱՀ-ի գծով հավաքագրումները կազմել են բոլոր եկամուտների մոտավորապես 32 տոկոսը, շահութահարկը՝ 9 տոկոսը, ակցիզային հարկը՝ 7 տոկոսը, մաքսատուրքը՝ 6 տոկոսը և այլ եկամուտները՝ 20 տոկոսը: Ընդ որում, միայն ակցիզային հարկը և մաքսատուրքն է, որ աճի հստակ միտում ունեն: Այլ եկամուտների տեսակարար կշիռը, որոնք ներառում են գույքահարկը, հողի հարկը, հաստատագրված վճարները, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար

կատարվող վճարները, պարզեցված հարկը, շրջանառության հարկը, այլ հարկային եկամուտները, տուրքերը, այլ եկամուտները և պաշտոնական դրամաշնորհները միասին կազմում են եկամուտների 19-20 տոկոսը (գծապատկեր 9 և 10):


Մնացած հարկերն ու տուրքերը, որոնցից պետական բյուջեի հարկերի և տուրքերի տեսակետից առավել կարևոր են շահութահարկը, ակցիզային հարկը և մաքսատուրքերը՝ եկամտային հարկին օրինակով հակառակ՝ աճի հստակ միտում չեն դրսևորում (տես՝ գծապատկեր 11): Չնայած՝ ակցիզային հարկի և մաքսատուրքի տեսակարար կշիռը որոշ չափով ավելացել է: Վերջին տարիներին ավելանալու միտում է դրսևորել բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարը: 2010թ. այն հարկերի ու տուրքերի 1.3%-ից²¹ 2017թ. հասել է 3.6%-ի (տես՝ գծապատկեր 12): Սակայն պետք է հաշվի առնել, որ չի բացառվում, որ Հայաստանն առաջիկա տարիներին բնական պաշարների օգտագործման հետ կապված մեծ ծախսեր ունենա (պոչամբարների պահպանում, այլ ծախսեր):

Գծապատկեր 11. ԱԱՀ-ն և եկամտային հարկը որպես ՀՆԱ և հարկերի ու տուրքերի տոկոս



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե
Ծանոթություն. Հարկերը ներառում են հարկերը և տուրքերը

Գծապատկեր 12. Շահութահարկը, ակցիզային հարկը և մաքսատուրքի տեսակարար կշիռը հարկերում և տուրքերում



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

21. Այս հետազոտության շրջանակներում բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարը ներկայացվում է որպես հարկերի և տուրքերի տոկոս: ՀՀ վիճակագրական կոմիտեն այն ներառել է հարկերի և տուրքերի թվում:

3.2 Հարկային համակարգի առաջարկվող փոփոխությունները

ՀՀ ֆինանսների նախարարությունն առաջարկում է հարկային համակարգում փոփոխություններն առաջ տանել հետևյալ հիմնական ուղղություններով. (1) Եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցում և հաստատուն դրույքաչափի կիրառում: Եկամտային հարկի, շահույթի և շահաբաժինների հարկերի հանրագումարի հարկման հավասար դրույքաչափերի սահմանում, (2) Շահութահարկի դրույքաչափերի նվազեցում, (3) Ենթակցիզային ապրանքների ցանկի ընդլայնում, ակցիզային հարկի տոկոսային դրույքաչափերի վերացում և ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացում, (4) Գույքային հարկերի գծով հարկային բեռի բարձրացում:

Ինքնազբաղված անձանց հարկման համակարգ

Շուրջ 2060 հարկ վճարող
Մինչև 9 մլն դրամ շրջանառություն

Ընտանեկան ձեռնարկատիրության հարկման համակարգ

Շուրջ 2740 հարկ վճարող
Մինչև 18 մլն դրամ շրջանառություն

Արտոնագրային հարկի համակարգ

Շուրջ 8200 հարկ վճարող
Շեմ գոյություն չունի

Շրջանառության հարկի համակարգ

Շուրջ 62550 հարկ վճարող
Մինչև 58.35 մլն դրամ

Հարկման ընդհանուր համակարգ

Շուրջ 11000 հարկ վճարող
ԱԱՀ դրույքաչափ՝ 20%
Շահութահարկի դրույքաչափ՝ 20%

Միկրոձեռնարկատիրության հարկման համակարգ

Մինչև 24 մլն դրամ

Շրջանառության հարկի համակարգ

Մինչև 115 մլն դրամ


Հարկման ընդհանուր համակարգ

ԱԱՀ դրույքաչափ՝ 20%
Շահութահարկի դրույքաչափ՝ 18%

ՀՀ ֆինանսների նախարարության տվյալներով²² տնտեսության արտահանելի հատվածը բնութագրվել է շահութաբերության ցածր մակարդակով այն դեպքում, երբ ներդրումները հիմնականում ուղղվել են ոչ արտահանելի ոլորտ և ՀՀ տնտեսության շահույթները հիմնականում կենտրոնացել են ոչ արտահանելի հատվածում:

22. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից պատրաստված «ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում փոփոխությունների կատարման»

Գծապատկեր 13. Շահութաբերությունը և ներդրումների տեսակարար կշիռները (տոկոս) արտահանելի և ոչ արտահանելի հատվածներում (տոկոս)



Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով ամենաշահութաբեր արտադրանքն ունեն սպասարկման այլ ծառայությունները (49.7%), հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործումը (37%), կացության և հանրային սննդի կազմակերպումը (28%), վարչական և օժանդակ գործունեությունը (27.6%) և շինարարությունը (23.8%): Մնացած ճյուղերի արտադրանքի շահութաբերությունը 20%-ից ցածր է, իսկ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման արտադրանքի շահութաբերությունը բացասական է (-8.1%):

Ակտիվների բարձր շահութաբերություն են ապահովում միայն սպասարկման այլ ծառայությունները (40.6%): Մնացած ակտիվների շահութաբերությունը չի հասնում 17%-ի, իսկ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման (-0.7%), ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման (-2.1%), առողջապահական և բնակչության սոցիալական սպասարկման ակտիվների (-3.9%) շահութաբերությունը բացասական է:

ՀՀ ֆինանսների նախարարությունը չի ներկայացնում շահութաբերության մակարդակի և արտահանելի և ոչ արտահանելի հատվածներում շահութաբերության մակարդակների տարբերության պատճառների վերլուծությունը: Մինչդեռ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված ժամանակաշրջանում՝ 2009-2016թթ., ՀՀ տնտեսությունը բնութագրվել է մրցակցության ցածր մակարդակով, մենաշնորհների առկայությամբ և այլ պատճառներով, ինչը կարող էր առանձին ճյուղերում կամ առանձին ապրանքների և ծառայությունների գծով գործարքների դեպքում բարձր շահութաբերություն ապահովել: Որոշ «անարտահանելի» ծառայություններ (օրինակ՝ վարսավիրական, թաղումների կազմակերպման և այլ ծառայություններ) կարող են աշխատել բարձր շահութաբերությամբ²³: Հատկանշական է, որ բարձր շահութաբերություն են արձանագրել այն ծառայությունները (համակարգիչների, բջջային հեռախոս-

23. Modex խորհրդատվական ընկերությունը, համագործակցելով ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ, հաշվարկել է խոշոր և միջին ընկերությունների միջին շահութաբերությունը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում: Ամենաբարձր շահութաբերությունն արձանագրվել է համակարգիչների, բջջային հեռախոսների, կենցաղային տեխնիկայի, կահույքի նորոգման, վարսավիրական ծառայությունների, թաղումների կազմակերպման, քիմաքսիման ծառայությունների, ֆիթնես-կենտրոնների աշխատանքի արդյունքում: Աղբյուրը՝ <https://bit.ly/2Z5bOou>

ների, կենցաղային տեխնիկայի, կահույքի նորոգման), որոնց մեծ մասը մատուցվում է փոքր արհեստանոցների կողմից²⁴, որոնք կոնկրետ մասնագիտական գիտելիքներ են պահանջում: Միևնույն ժամանակ, արտահանող ընկերությունները չունեն ներքին շուկայում մենաշնորհային դիրքեր զբաղեցնող ընկերությունների առավելությունները և արտաքին շուկաներում պետք է մրցակցեն տվյալ շուկայում գործող ընկերությունների հետ: Դրանով պայմանավորված՝ պետք է ընդունեն արտաքին շուկաներում գործող բիզնես գործունեության ծավալման կանոնները և այդ շուկաներում ձևավորվող գները: Այն դեպքում, որ անցած ժամանակաշրջանում առանձին տեղական ընկերություններ կարողանում էին «իրենք» սահմանել ներքին շուկայում գործունեության կանոնները և գները:

Հարկային համակարգի փոփոխությունների նպատակներն են.

- 1) Ազգային տնտեսության ներդրումային գրավչության բարձրացումը
- 2) Տնտեսական ակտիվության մակարդակի բարելավումը
 - ա. Արտահանման համար կայուն նախադրյալների ստեղծումը
 - բ. Տնտեսական աճի համար կայուն նախադրյալների ստեղծումը
- 3) Հարկաբյուջետային կայունության ամրապնդումը:

3.3 Առաջարկվող փոփոխությունների եկամտային հետևանքները

Հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները տարբեր ազդեցություն կունենան եկամտային տարբեր մակարդակ ունեցող վարձու աշխատողների եկամուտների վրա: Եթե ամենափոքր եկամուտ ունեցող վարձու աշխատողների եկամուտը 2020-2023թթ. կավելանա ամսական 1500 դրամով, ապա 150 հազար դրամից 2 միլիոն եկամուտ ունեցող քաղաքացիների եկամուտները կավելանան ամսական մի քանի տասնյակ հազար դրամով, իսկ, օրինակ, 9 միլիոն դրամ եկամուտ ունեցողին՝ ամսական մեկ միլիոն դրամ և ավելի:

ՀՀ ֆինանսների նախարարության «դիտարկումները ցույց են տալիս, որ շուրջ 610 հազար վարձու աշխատողների շուրջ 65 տոկոսի մասով հայտարարագրված ամսական եկամուտը չի գերազանցում 150 հազար դրամը, իսկ ամսական 2 միլիոն դրամից ավելի եկամուտ հայտարարագրվում է վարձու աշխատողների ընդամենը 0.3 տոկոսի մասով»:

Այսինքն այս փոփոխությունների արդյունքում ամսական 150 հազար դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողների եկամուտն ըստ տարիների կավելանա աղյուսակ 2-ում նշված չափերով, որտեղ լրացուցիչ եկամուտը 2019թ. ստացած եկամտի համեմատ աճն է:

24. Իսկ ՀՀ վիճակագրական կոմիտեն տեղեկատվություն է տրամադրում այս ծառայությունները մատուցող խոշոր և միջին ընկերությունների ցուցանիշների վերաբերյալ:

Աղյուսակ 2. Ամսական 150 հազար դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողների եկամուտների վրա հարկային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը

Տարին	2019	2020	2021	2022	2023
Հարկի դրույքաչափը	23%	23%	22%	21%	20%
Առձեռն եկամուտ	115,500	115,500	117,000	118,500	120,000
Լրացուցիչ եկամուտը	0	0	1,500	3,000	4,500

Աղբյուր՝ սեփական հաշվարկներ

Այս փոփոխությունների արդյունքում զգալիորեն կշահեն ամսական 2 մլն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողները (տես՝ աղյուսակ 3): Ամսական 2 միլիոն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողի աշխատավարձը 2020թ. կավելանա 92,500 դրամով (կամ 2019թ. սկզբում գործող փոխարժեքով մոտավորապես \$190), 2021թ.՝ 112,500 դրամով (\$230), 2022թ.՝ 132,500 դրամով (\$270), իսկ 2023թ.՝ 152,500 դրամով (\$310):

Աղյուսակ 3. Ամսական 2 միլիոն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողների եկամուտների վրա հարկային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը

Տարին	2019	2020	2021	2022	2023
Հարկի դրույքաչափը	23%, 28%	23%	22%	21%	20%
Առձեռն եկամուտ	1,447,500	1,540,000	1,560,000	1,580,000	1,600,000
Լրացուցիչ եկամուտը	0	92,500	112,500	132,500	152,500

Աղբյուր՝ սեփական հաշվարկներ

Այս փոփոխությունների արդյունքում զգալիորեն կշահեն ամսական 9 մլն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողները (տես՝ աղյուսակ 4): Ամսական 9 միլիոն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողի աշխատավարձը 2020թ. կավելանա 1,002,500 դրամով (\$2000), 2021թ.՝ 1,092,500 դրամով (\$2250), 2022թ.՝ 1,182,500 դրամով (\$2400), իսկ 2023թ.՝ 1,272,500 դրամով (\$2600):

Աղյուսակ 4. Ամսական 2 միլիոն դրամ եկամուտ ստացող վարձու աշխատողների եկամուտների վրա հարկային օրենսդրության փոփոխությունների ազդեցությունը

Տարին	2019	2020	2021	2022	2023
Հարկի դրույքաչափը	23%, 28%, 36%	23%	22%	21%	20%
Առձեռն եկամուտ	5,927,500	6,930,000	7,020,000	7,110,000	7,200,000
Լրացուցիչ եկամուտը	0	1,002,500	1,092,500	1,182,500	1,272,500


Աղբյուր՝ սեփական հաշվարկներ

3.4 Առաջարկվող փոփոխությունների հետևանքները մարզերի վրա

Եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխություններն իրենց ազդեցությունը կունենան տարածքային զարգացման վրա՝ ավելի խորացնելով մայրաքաղաք Երևանի և մարզերի բնակչության եկամուտների միջև առկա անհամաչափությունները:

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն 2017թ. (2019թ. մարտի դրությամբ սա տվյալների շտեմարանում ամենաթարմ տեղեկատվությունն է) միայն Սյունիքի մարզում է, որ միջին ամսական անվանական աշխատավարձն արդեն 2012թ.-ից գերազանցում է 150 հազար դրամը և 2017թ. կազմել է գրեթե 218 հազար դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձի մեծությամբ Սյունիքի մարզը գերազանցել է նույնիսկ Երևանին, ուր այն կազմել է 194.2 հազար դրամ: Երեք մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը փոփոխությունների է ենթարկվել Հայաստանի վերջին տարիների տնտեսական ցուցանիշներին համահունչ և մոտեցել է 150 հազար դրամի շեմին, այդ թվում՝ Արմավիրում կազմել է 149.4 հազար դրամ, Լոռիում՝ 148.9 հազար դրամ, Կոտայքում՝ 149.9 հազար դրամ: Մնացած մարզերում աշխատավարձի միջին մակարդակը 145 հազար դրամից ցածր է. Արագածոտնի մարզում կազմել է 122 հազար դրամ, Արարատում՝ 144.6 հազար դրամ, Գեղարքունիքում՝ 140.6 հազար դրամ, Շիրակում՝ 127.4 հազար դրամ, Վայոց ձորում՝ 132 հազար դրամ, Տավուշում՝ 143 հազար դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղական բնակչության մի մասն ընդհանրապես վարձու աշխատող չէ, նրանք ուղղակիորեն չեն շահելու այս փոփոխություններից:

Գծապատկեր 14. ՀՀ մարզերում միջին ամսական անվանական աշխատավարձը 2008-2017թթ. (հազար դրամ)



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՀ կառավարությունը չի ներկայացրել տվյալներ այն մասին, թե այն լրացուցիչ 27-37 մլրդ դրամ եկամուտից, որը մնալու է քաղաքացիների գրպանում, որ մասն է

բաժին հասնելու մարզերի բնակչությանը: Կարելի է ենթադրել, որ 2 միլիոն դրամը գերազանցող աշխատավարձ ստանում են ֆինանսական կազմակերպությունների, բջջային օպերատորների, հանքարդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների ղեկավարները: Եթե ոչ բոլոր ընկերությունների, ապա դրանց բացարձակ մեծամասնության գլխամասային գրասենյակները գտնվում են Երևանում, ինչից կարելի է ենթադրել, որ ընկերությունների ղեկավարներն ապրում են մայրաքաղաքում: Եկամտային հարկի դրույքաչափերի համահարթեցման արդյունքում հիմնականում շահելու են մայրաքաղաքում ապրող վարձու աշխատողները: Ամենայն հավանականությամբ այս փոփոխությունն ավելի կխորացնի մայրաքաղաքի և մարզերի բնակիչների կենսամակարդակների միջև տարբերությունը և չի նպաստի տարածքային համաչափ զարգացմանը:

3.5 Առաջարկվող փոփոխությունների ռեգրեսիվությունը

2016թ. հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան 2015թ. սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ աշխարհի երկրների առաջնորդների կողմից ընդունված «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները (ՄԱԿ 2016): Ենթադրվում է, որ երկրները պետք է իրենց ջանքերը համախմբեն աղքատությունն իր բոլոր ձևերով վերացնելու, անհավասարությունների դեմ պայքարելու և կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները լուծելու ուղղությամբ: Կայուն զարգացման նպատակներից մի քանիսը վերաբերում են աղքատության կրճատմանն ու հավասարությանը: Մասնավորապես, նպատակ 8-ի (Խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար) շրջանակներում թույլ զարգացած երկրները²⁵ պետք է ապահովեն տարեկան առնվազն 7% ՀՆԱ աճ, 10-րդ նպատակի շրջանակներում (Կրճատել անհավասարությունը երկրների ներսում և դրանց միջև) ենթադրվում է, որ մինչև 2030թ. երկրները պետք է աստիճանաբար հասնեն բնակչության ստորին 40% եկամուտների աճին՝ ազգային միջինից բարձր ցուցանիշով (նպատակ 10.1), պետք է ընդունեն քաղաքականություններ, հատկապես՝ հարկաբյուջետային, աշխատավարձերի և սոցիալական պաշտպանության քաղաքականություններ և աստիճանաբար հասնեն հավասարության առավել բարձր մակարդակի (նպատակ 10.4), իսկ նպատակ 12-ի (Ապահովել սպառման և արտադրության կայուն մոդելներ) շրջանակներում պետք է խթանեն պետական գնումների կայուն գործելաձևեր՝ համաձայն ազգային քաղաքականությունների և գերակայությունների (նպատակ 12.7):

Եթե ենթադրենք, որ 2019թ. մեկ անձի հաշվով նվազագույն սպառողական զամբյուղը կազմում է մոտավորապես 62,500 դրամ, ապա 4 անձից բաղկացած ընտանիքը, որն ունի 2 երեխա, իսկ երկու ծնողները ստանում են ամսական 150,000 դրամ աշխատավարձ հիպոթետիկ իրավիճակում այդ ամիս կվճարի 107,508 դրամ հարկ

25. 2018թ.-ից Հայաստանը դասվում է միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների շարքում:

կամ իր ամսական եկամուտների 35.84%-ը: Միևնույն ժամանակ, այս ընտանիքին 19,000 դրամ չի բավականացնի նվազագույն սպառողական զամբյուղի շրջանակներում իր կենցաղը կազմակերպելու համար:

	Դրամ
Երկու ծնողների ընդհանուր աշխատավարձը $(150,000 \times 2 =)$	300,000
Երկու ծնողների աշխատավարձից գանձվող եկամտային հարկը $(300,000 \times 23\% =)$	69,000
Ընտանիքի բյուջե մուտքագրվող եկամուտը	231,000
Չորս անձից բաղկացած ընտանիքի սպառումը $(62,500 \times 4 =)$	250,000
Սպառման համար չբավարարող գումարի մեծությունը	(19,000)
Սպառմանն ուղղվող 231,000 դրամից գանձվող ԱԱՀ $(231,000 \times 16.67\% =)$	38,508
	Տոկոս
Եկամտային հարկի և ԱԱՀ-ի գծով վճարումները որպես ընտանիքի եկամուտների տոկոս $\left(\frac{(69,000 + 38,508)}{300,000} \right) = \left(\frac{(69,000 + 38,508)}{300,000} \right) =$	35.84

Միևնույն ժամանակ, եթե ընտանիքի 2 աշխատող անդամները ամսական 2 միլիոն դրամ գումար են վաստակում, ծախսում են նվազագույն սպառողական զամբյուղի համար նախատեսված գումար, ապա այդ ընտանիքն այդ ամիս կվճարի 1,146,675 դրամ հարկ կամ իր եկամուտների 28.67%-ը: Ակնհայտ է հարկային դրույքաչափերի ռեգրեսիվ բնույթը:

	Դրամ
Երկու ծնողների ընդհանուր աշխատավարձը	4,000,000
Երկու ծնողների աշխատավարձից գանձվող եկամտային հարկը	1,105,000
Ընտանիքի բյուջե մուտքագրվող եկամուտը	2,895,000
Չորս անձից բաղկացած ընտանիքի սպառումը	250,000
Խնայողություն ²⁶	2,645,000
Սպառմանն ուղղվող 250,000 դրամից գանձվող ԱԱՀ ²⁷	41,675
	Տոկոս
Եկամտային հարկի և ԱԱՀ-ի գծով վճարումները որպես ընտանիքի եկամուտների տոկոս $\left(\frac{(1,105,000 + 41,675)}{4,000,000} \right) = \left(\frac{(1,105,000 + 41,675)}{4,000,000} \right) =$	28.67

Որպեսզի երկրորդ ընտանիքի կողմից վճարվող հարկերի տեսակարար կշիռը հավասարվի առաջին ընտանիքի կողմից իր եկամուտներից վճարվող հարկերի տե-

26. Նույնիսկ, եթե խնայողությունները որպես ավանդ ներդրվեն բանկում, ստացված տոկոսային եկամուտների դիմաց գանձվող հարկը գանձվելու ավանդը մարվելու պահին:

27. Այս ընտանիքի կողմից վճարվող ԱԱՀ-ի գումարն ավելի մեծ կլինի, քանի որ այն ամբողջությամբ կօգտագործի սպառման համար նախատեսված ամբողջ գումարն, այն դեպքում, երբ առաջին ընտանիքին սպառման զամբյուղի շրջանակներում իր կենցաղը կազմակերպելու համար 19000 դրամ չի բավականացնում:

սակարար կշռին, երկրորդ ընտանիքը առաջինի համեմատ 7.88 անգամ ավելի շատ պետք է սպառի: Հաշվի առնելով, որ քիչ հավանական է, որպեսզի 4 հոգուց կազմված ընտանիքն ամսական 1.9 միլիոն դրամ ուղղի սպառմանը, մեծ է հավանականությունը, որ եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխության արդյունքում բարձր եկամուտ ունեցող ընտանիքներին մնացող լրացուցիչ գումարները կծախսվեն արտասահմանում հանգստի, շքեղության ապրանքների ձեռք բերման և այլ նպատակներով, ինչը չի նպաստի ՀՀ տնտեսության զարգացմանը և բացասաբար կազդի Հայաստանի առևտրային հաշվեկշռի վրա: Հաշվի առնելով գույքահարկի բնագավառում առաջարկվող փոփոխությունները, անշարժ գույքի շուկա ուղղվող գումարները ևս նվազում կարձանագրեն (դրան անդրադարձ է կատարվում հետագայում):

	Դրամ
Երկու ծնողների ընդհանուր աշխատավարձը	4,000,000
Երկու ծնողների աշխատավարձից գանձվող եկամտային հարկը	1,105,000
Ընտանիքի բյուջե մուտքագրվող եկամուտը	2,895,000
Չորս անձից բաղկացած ընտանիքի սպառումը (նվազագույն սպառողական զամբյուղի 7.88-ապատիկը)	1,971,206
Խնայողություն	923,794
Սպառմանն ուղղվող 1,971,206 դրամից գանձվող ԱԱՀ	328,600
	Տոկոս
Եկամտային հարկի և ԱԱՀ-ի գծով վճարումները որպես ընտանիքի եկամուտների տոկոս $\left(\frac{1,105,000 + 328,600}{4,000,000} \right) = \left(\frac{1,105,000 + 328,600}{4,000,000} \right) =$	35.84

3.6 Գույքահարկի բնագավառում դիտարկվող փոփոխությունները

ԱԱՀ հայաստանյան առաքելության ղեկավար Հոսեյն Սամիեիին ողջունել էր արդարությունը բարելավելու նպատակով գույքահարկը 2019-2020թթ. վերակառուցելու ՀՀ իշխանությունների հանձնառությունը:

ՀՀ իշխանությունները պետք է բարձր գույքահարկ սահմանեն շքեղ առանձնատների, թանկարժեք մեքենաների և այլ թանկարժեք գույքի համար: Սակայն քիչ հավանական է, որ առաջիկա տարիներին գույքահարկը կդառնա պետական բյուջեի ֆինանսավորման հուսալի և կայուն աղբյուր՝ փոխհատուցելով եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման արդյունքում պետական բյուջեի կրած կորուստները, որովհետև.

- 1) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-137, ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է 1997թ. հունիսի 24-ին) Հոդված 28¹28¹-ի համաձայն (Վարչական բյուջեի մուտքերն ու ելքերը) անշարժ գույքի հարկը և փոխադրամիջոցների գույքահարկը հանդիսանում է տեղական ինքնակառավարման մարմինների հարկային եկամուտ,

- 2) Գույքահարկի հարկման բազան սահմանափակ է և հարկի բարձր դրույքաչափերի սահմանումը կնվազեցնի նոր անշարժ գույքի ձևավորումը և տեղական բյուջեների եկամուտների աճը:

Եկամուտները հարկելու փոխարեն գույքահարկը հարկելու քաղաքականությունը վտանգավոր է պետական բյուջեի համար, քանի որ կարող է նվազեցնել հարկման բազան (ՀՀ քաղաքացիների եկամուտները կարող են ավելանալ, իսկ ՀՀ-ում նրանց ունեցած գույքը՝ ոչ): Հարկը եկամտի աղբյուրից գանձելու փոխարեն դրա գանձումը կախվածության մեջ է դնում քաղաքացու Հայաստանում գույք ունենալու ցանկությունից: Բացի այդ, բյուջեի եկամուտները կախվածության մեջ են դրվում անշարժ գույքի շուկայի գներից և կարող է ավտոմատ կայունարարների դերին հակառակ դեր կատարել: Այդպիսով եկամուտները կնվազեն այն ժամանակ, երբ դրանք ամենից շատ են անհրաժեշտ²⁸: Այս մեխանիզմը կարող է ՀՀ տնտեսությունն ավելի խոցելի դարձնել արտաքին ցնցումների հանդեպ:

Չի բացառվում, որ եկամտային հարկի դրույքաչափերի նվազեցման արդյունքում ձևավորված լրացուցիչ եկամուտները ՀՀ քաղաքացիներն ուղղեն այլ երկրներում անշարժ գույք ձեռք բերելուն: Այդ դեպքում լրացուցիչ եկամուտները ՀՀ տնտեսության համար որևէ դրական դեր չեն խաղա, իսկ կապիտալի արտահոսքը կարող է տնտեսական դժվարությունների ժամանակ վատթարացնել տնտեսության վիճակը:

3.7 Միջազգային կառույցների տված գնահատականները

Միջազգային ֆինանսական կառույցները բազմիցս անդրադարձել են ՀՀ հարկային համակարգին և դրա պրոգրեսիվությանը:

Davoodi-ն և Grigorian-ը (2007) արձանագրել են, որ ժամանակի ընթացքում Հայաստանի հարկային համակարգն ավելի քիչ էր հիմնվում ուղղակի հարկերի վրա, որը հակված է աճել եկամուտների հետ միասին և արձագանքել տնտեսական զարգացումներին և ավելի շատ է հիմնվում անուղղակի հարկերի վրա: Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկերի մեջ և 1990-ականների կեսերի 64%-ի համեմատ 2000-ականների սկզբին ավելացել է՝ հասնելով 80%-ի: Հեղինակների կարծիքով հարկային քաղաքականությունը անուղղակի ռեգրեսիվ հարկերի վրա հիմնելն ավելացնում է անհավասարությունը, քանի որ ցածր եկամուտներ ունեցող տնային տնտեսությունների սպառման սահմանային հակվածությունն ավելի մեծ է: Միևնույն ժամանակ, համախառն եկամուտների աճը, հատկապես եթե լրացուցիչ եկամուտների մեծ մասը կուտակվել է բարձր եկամուտներ ունեցող անհատների մոտ, չի կարող հանգեցնել հարկերի հավաքագրման էական բարելավման, եթե հարկային համակարգը բավական պրոգրեսիվ չէ: Տարածաշրջանին վերաբերող հրապարակումներում նույնպես նշվել է հարկերի պրոգրեսիվությունը բարելավելու անհրաժեշտության մասին

28. Տնտեսական անկման պայմաններում անշարժ գույքի գները սովորաբար ընկնում են, ինչը կարող է հանգեցնել հարկման բազայի նվազման: Միևնույն ժամանակ տնտեսական անկման ժամանակ ավելանում են այնպիսի ծախսերը, ինչպիսիք են, օրինակ, գործազրկության և սոցիալական պաշտպանության նպաստները:

(Kunzel, de Imus, Gemayel, Herrala, Kireyev and Talishli 2018):

2008թ. Gracia-ն, Floerkemeier-ը և Darius-ը եզրակացրել են, որ Հայաստանում ավտոմատ կայունարարները շատ թույլ են, քանի որ ծախսային մասում թույլ են գործադրության նպաստները և տնտեսությունում բացասական զարգացումների դեպքում անհրաժեշտ այլ ծախսերը, իսկ եկամուտների մասում հարկերի պրոգրեսիվության որևէ առկայություն չի քիչ է դառնում հարկային վարչարարության թուլության պատճառով՝ թուլացնելով տնտեսական ակտիվության և հարկերի հավաքագրման միջև կապը:

2010թ. ԱՄՀ հրապարակումը (El-Ganainy and Weber 2010) ՀՀ իշխանություններին խորհուրդ էր տվել եկամուտների հավաքագրման, հարկային համակարգի պրոգրեսիվության ավելացման և հարկային վարչարարության բարելավման միջոցով ուժեղացնել ավտոմատ կայունարարների ազդեցությունը: Հեղինակները եզրակացրել էին, որ Հայաստանում ավտոմատ կայունարարների համեմատաբար թույլ ազդեցությունը բացատրող երկու գործոններից մեկը հարկային համակարգի ոչ բավարար պրոգրեսիվությունն է: Այն բացատրվում է դրա ոչ համամասնականությամբ²⁹, տարածված բացառություններով և արտոնություններով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավտոմատ կայունարարներն ապահովում են արագ և ինքնուրույն ճշգրտող հարկաբյուջետային պատասխան, հեղինակները, ի թիվս այլ խորհուրդների, առաջարկում էին ավելացնել եկամտահարկի պրոգրեսիվությունը: 2017թ. հունիսի հրապարակման մեջ ԱՄՀ փորձագետները (Dabla-Norris, End, Rahim, Zohrab and Crooke 2017) նշել են, որ պետական ծախսերի ցածր մակարդակը և հարկային համակարգի թույլ պրոգրեսիվությունը թուլացնում են ավտոմատ կայունարարների ազդեցությունը Հայաստանում:

2014թ. կատարված պետական ծախսերի ուսումնասիրության հիման վրա Համաշխարհային բանկը եզրակացրել էր (World Bank 2014), որ արդարության տեսակետից նախընտրելի է դիտարկել այնպիսի փոփոխություններ, որոնք ուղղակի հարկերի գծով մուտքերը կապահովեն կամ հարկերի դրույքների բարձրացման, կամ դիտարկվող տնտեսություն ավելի շատ աշխատակիցներ ներգրավելու հաշվին:

Միջազգային գործընկերները պարբերաբար բարձրաձայնել են Հայաստանում հարկային գերավճարների խնդրի մասին: 2014թ. զեկույցում Համաշխարհային բանկը (World Bank 2014b) նշում էր ՀՆԱ 5%-ը կազմող հարկային գերավճարների մասին, որը լուրջ խոչընդոտ է գործարար միջավայրի արդյունավետ գործունեության համար, քանի որ ձեռնարկությունների շրջանառու միջոցներն օգտագործվում են պետական բյուջեն «վարկավորելու» համար: 2016թ. Համաշխարհային բանկը հայտնել էր (World Bank 2016), որ 2010-2014թթ. ողջ ընթացքում գործող հարկ վճարողների կողմից կատարած հարկային գերավճարները օժանդակել են փաստացի հարկերի

29. Օրինակ, եկամտային հարկի և վերին, և ներքին շեմերը կիրառվում էին եկամուտների փոքր և համեմատաբար համեստ մակարդակների դեպքում, ինչը նշանակում էր, որ հարկային համակարգը ծանր բեռ է դնում ցածր եկամուտ ունեցողների վրա, չնայած դրա դիմաց բյուջեն փոքր եկամուտներ է ստանում:

հավաքագրումը: Հարկային գերավճարները մասնավոր հատվածից ստացած հարկային կանխավճարների, վերադարձման ենթակա ԱԱՀ գումարի և այլ պատճառով պետական բյուջե մուտքագրման արդյունքում պետական բյուջեի պարտավորություններն են: 2014թ. վերջին հարկային գերավճարների մեծությունը՝ 258.7 մլրդ դրամ, գրեթե երկու անգամ գերազանցում էր ժամկետանց հարկային ապառքների մեծությունը: Ժամկետանց հարկային պարտավորությունների մեծությունը 2015թ. կազմում էր 120 մլրդ դրամ, սակայն դրա մի մասը ենթակա է վճարման սնանկ կամ չաշխատող ընկերությունների կողմից:

Աղյուսակ 5. Հարկային ապառքների և գերավճարների գծով հիմնական ցուցանիշները 2012-2015թթ. (տարեվերջին, միլիարդ ՀՀ դրամ)

	2012	2013	2014	2015
Հարկային ապառքներ	100.1	102.7	114.0	120.5
Հարկային գերավճարներ	234.7	254.7	258.7	262.7
Զուտ հարկային ապառքներ	(134.6)	(152.0)	(155.3)	(142.2)
ՀՆԱ (անվանական)	4,267.0	4,556.0	4,828.0	5,043.6
Զուտ հարկային ապառքներ՝ ՀՆԱ %	(3.2)	(3.3)	(3.2)	(2.8)

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ, 2016

Այսինքն, մասնավոր հատվածը ՀՆԱ-ի 3 տոկոսից ավելի չափով անուղղակի սուբսիդավորում էր պետական բյուջեն:

2017թ. զեկույցում Համաշխարհային բանկը (World Bank 2017) մատնանշում էր ՀՀ տնտեսության չափի համեմատ եկամուտներ հավաքագրելու սահմանափակ ունակությունը: Բանկը նաև նշել է, որ Հայաստանի շահութահարկը համեմատաբար արդյունավետ է: Աղքատության խնդիրներին անդրադառնալով՝ զեկույցը նշում էր, որ ընտանեկան նպաստի ծրագիրն ընդգրկում է կարիքավոր բնակչության ընդամենը 27.5%-ը³⁰: 2015թ. ընտանեկան նպաստի ծրագիրն ընդգրկել է բնակչության մոտ 13%-ը, չնայած ծրագրի հասցեականությունը դեռևս էական բարելավման կարիք ունի, քանի որ միջոցների ընդամենը 61%-ն է տրամադրվել աղքատներին:

Միջազգային ֆինանսական կառույցների մի զգալի մասն աչքի է ընկել լավատեսությամբ և Հայաստանում տեղի ունեցող մի շարք իրադարձություններ դիտարկվել է որպես «հնարավորությունների պատուհան»: Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից 100 տարի հետո և Հայաստանում թավջա, ոչ բռնի ժողովրդական հեղափոխությունից 5 ամիս առաջ Համաշխարհային բանկը բարդ բարեփոխումներ իրականացնելու հնարավորությունների պատուհանի մասին զեկույց էր հրապարակել (World Bank 2018b), որտեղ նշում էր, որ իշխող Հայաստանի հանրապետական կուսակցությունը (այսուհետ՝ ՀՀԿ) հզոր հաղթանակ է տարել 2017թ. ապրիլին կայացած խորհրդարանական ընտրություններում, ակնարկելով, որ 105 տեղ ունեցող խորհրդ-

30. Ընտանեկան նպաստի շահառու ընտանիքների թիվը 2008թ. կազմել էր տարեկան միջին 121 հազար, 2011-ին դարձել էր շուրջ 91 հազար, որից հետո նորից հետևողականորեն աճել է՝ 2016թ. վերջին դառնալով 107 հազար:

դարանում ստացած 58 մանդատը ՀՀ-ին հնարավորություն է տալիս ձևավորել կայուն մեծամասնություն և խրախուսել արտահանման ընդլայնումն ու օտարերկրյա ուղղակի ներդրումները: Ձեկույցը հղում էր կատարում GIZ-ի 2011թ. հրապարակմանը, որը բացահայտել էր, որ Հայաստանում ներդրում կատարած սփյուռքահայերի երկու երրորդի կարծիքով անարդյունավետ պետական կառավարման համակարգի, հարկային քաղաքականության և կոռուպցիայի պատճառով գործարար միջավայրն անբարենպաստ է:

2018թ. ապրիլ-մայիսին Հայաստանում կատարված թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո իր առաջին հրապարակման մեջ Համաշխարհային բանկը (World Bank 2018) նշում էր, որ «Թեև նոր կառավարությունը հայտարարել է դեֆիցիտի կրճատման, վերաբաշխման քաղաքականության ամրապնդման և հարկերից միտումնավոր խուսափելու դեմ պայքարի ուղղությամբ իր հանձնառության մասին, սակայն մանրամասները դեռևս պետք է ձևակերպվեն»: Վերն ասվածի ենթատեքստում անհասկանալի է, թե (1) ինչպես է եկամտային հարկի համահարթ դրույքաչափի ներդրումը նպաստելու վերաբաշխման քաղաքականության ամրապնդմանը, և (2) ինչպես է ՀՀ կառավարությունը պատրաստվում պայքարել «հարկերից միտումնավոր խուսափելու» դեմ, երբ հայտարարում է, որ եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափի համակարգը եկամուտների վերաբաշխման նպատակին չի ծառայում, քանի որ բարձր եկամուտ ունեցող անձինք խուսափում են հարկեր վճարելուց և այդ պատրվակով պատրաստվում է փոխել օրենսդրությունը:

Եկամտային հարկի համահարթ դրույքաչափին անցումը և առաջիկա մի քանի տարիներին այդ դրույքների իջեցումը ՀՀ ֆինանսների նախարարությունը հիմնավորել էր ՀՀ կառավարության ծրագրում «ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելու և այն որոշակիորեն անուղղակի հարկերի վրա տեղափոխելու» դրույթի առկայությամբ: 2018թ. ամռանը Համաշխարհային բանկը նշել է (World Bank 2018), որ «անուղղակի հարկերն ապահովել են հավաքվող հարկերի գերակշիռ մասի աճը»: Իր եկամուտները դիվերսիֆիկացնելու փոխարեն ՀՀ կառավարությունը նախաձեռնում է փոփոխություններ, որոնք պետական բյուջեի տեսակետից ավելի կմեծացնեն անուղղակի հարկերի դերը, պետական բյուջեի եկամուտները կդարձնեն ավելի քիչ դիվերսիֆիկացված, անուղղակի հարկերի՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հավաքագրումները կլինեն ավելի մեծ և պետական բյուջեի եկամուտների ավելի մեծ մասը կկազմեն՝ նվազեցնելով պետական բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացիան և ավելացնելով դրանց հետ կապված ռիսկերը:

ԱԱՀ-ն կարծիք է հայտնել³¹, որ ՀՀ կառավարության կողմից առաջարկվող հարկային բարեփոխումները կարճաժամկետ հատվածում կհանգեցնեն եկամուտների կորստի, իսկ հարկային կարգապահության բարելավման արդյունքում եկամուտների ավելացումը կնյութականանա միայն ժամանակի ընթացքում: ԱԱՀ կարծիքով կորո

31. ԱԱՀ-ն «Աթենդ-բայ» ծրագրով Հայաստանին \$250 մլն կտրամադրի <https://banks.am/am/news/newsfeed/16934>, ՀՀ-ում տնտեսական աճը 2019թ. կկազմի 4,5%. ԱԱՀ կանխատեսում http://arka.am/am/news/economy/HH_um_tntesakann_ajy/ 2019թ. փետրվարի 26-ին կայացած հայաստանյան առաքելության ղեկավար Հոսեյն Սամիեիի մամուլի ասուլիս:

ստների հետևանքները մեղմելու տեսակետից խիստ կարևոր է ներդնել հարկային բարեփոխումների ամբողջ փաթեթը՝ միաժամանակ աչքի առաջ ունենալով փոփոխությունների հնարավոր ազդեցությունը սոցիալական արդարության³² վրա: ԱՄՀ-ն ողջունել էր արդարության բարելավման նպատակով 2019-2020թթ. գույքի հարկման բնագավառում դիտարկվող փոփոխությունները և կոչ արել հետագա ջանքեր գործադրել հարկային վարչարարությունը բարելավելու և հարկերից խուսափելու խորը արմատավորված սովորույթի դեմ պայքարի ուղղությամբ: ԱՄՀ կարծիքով, չնայած եկամտային հարկի համահարթ դրույքաչափի կիրառումը **կարող է** միջնաժամկետ հեռանկարում դրական արդյունքի հանգեցնել, կարճաժամկետ հեռանկարում պետք է որոնել կորսվելիք եկամուտների փոխարեն այլ աղբյուրներից եկամուտներ ստանալու տարբերակներ:

3.8 Փոփոխությունների քննարկման մասնակցայնությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունն իրականացրել է ընդհանուր հարկային վերլուծություն³³, որի արդյունքում ձևավորված առաջարկությունները պարբերաբար քննարկվել են ՀՀ փոխվարչապետի և ՀՀ վարչապետի մոտ՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության, Կենտրոնական բանկի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչների մասնակցությամբ: ՀՀ ֆինանսների նախարարությունը նշել է, որ որոշ քննարկումների մասնակցել են նաև հարկ վճարողների, հասարակական-մասնագիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ, իսկ առանձին ոլորտների մասով հարկային օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունները ՀՀ ֆինանսների նախարարությունում քննարկվել են ոլորտը ներկայացնող հարկ վճարողների հետ³⁴: ՀՀ ֆինանսների նախարարության այս գործելաոճի հետևանքով գործընթացը եղել է ոչ մասնակցային, ինչը ՀՀ ֆինանսների նախարարության միջոցառումներին չիրավիրված մի շարք կազմակերպություններին ստիպել է կազմակերպել իրենց քննարկումները, որոնց նախարարության ներկայացուցիչները հրավիրվել են:

32. ԱՄՀ հայերեն տեքստում անգլերեն «equity» բառը թարգմանվել է որպես «հավասարություն», որը սակայն ճիշտ չի արտահայտում հարկային օրենսդրության փոփոխությունների քննարկումների ժամանակ փոփոխությունները քննադատողների մտահոգության առարկաներից մեկի էությունը:

33. ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը քաղաքացի Հրակ Փափազեանին

34. Պարզ չէ, թե ինչ սկզբունքով է նախարարությունն ընտրել այն կազմակերպություններին, որոնց ներկայացուցիչներին հրավիրել է:

4. Վերլուծություն

ՀՀ ֆինանսների նախարարությունը հարկային համակարգի փոփոխությունների սկզբունքների թվում նշել է.

- 2019թ. պետական բյուջեի վրա ազդեցության տեսանկյունից չեզոքությունը
- Ուղղակի հարկերի գծով հարկային բեռի նվազեցումը, սպառման, գույքային հարկերի գծով հարկային բեռի բարձրացումը
- Հարկային համակարգի պարզեցումը
- Հարկային համակարգի արդարությունը
- Փոփոխությունների համապարփակ, հավասարակշռված ձևով իրականացումը:

Իրավական ակտերի նախագծերի www.e-draft.am կայքում տեղադրված նախագծի հոդված 47-ի 5-րդ պարբերության առաջին նախադասության համաձայն «Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ հոդվածները և 27-րդ հոդվածի 1-ին մասն ուժի մեջ են մտնում 2019 թվականի սեպտեմբերի 1-ից»: Օրենքի նախագծի վերը նշված 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է եկամտային հարկի դրույքաչափերը: Այդ առումով 2019թ. պետական բյուջեի վրա չեզոքության վերաբերյալ փաստարկը համոզիչ չէ:

Գույքային հարկերի գծով հարկային բեռի բարձրացման վերաբերյալ պնդումը ևս համոզիչ չէ, քանի որ դրա վերաբերյալ դրույքներ ներառված չեն եղել ոչ 2018թ. նոյեմբերի 15-30-ը www.e-draft.am կայքում քննարկված նախագծում, ոչ 2019թ. հունվարի 23-ից փետրվարի 7-ը քննարկված նախագծում, որը չնայած նոյեմբերին քննարկված նախագծի համեմատ ենթարկվել էր էական փոփոխությունների, սակայն չէր անդրադառնում գույքահարկին:

Հարկային օրենսգրքի նախագիծը համակարգի պարզեցում է նախատեսում ինքնազբաղված անձանց, ընտանեկան ձեռնարկատիրության և արտոնագրային համակարգում գործող սուբյեկտների համար: Նախագիծը բարդացնում էր³⁵ շրջանառության հարկով հարկման ենթակա շեմը չգերազանցող հաշվապահական, խորհրդատվական, իրավաբանական ծառայություններ մատուցող ձեռնարկատերերի հարկային կարգավորումները:

Հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները մեծացնում են հասարակության առավել ապահովված և քիչ ապահովված խավերի բարեկեցության միջև տարբերությունը և այդ առումով համակարգի արդարության մասին պնդումները հիմնավոր չեն: Ծավալված քննարկումների ժամանակ արձանագրվել են մի քանի խիստ բացասական միտումներ: Մասնավորապես, եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափերի համակարգը փոխելու կողմնակիցներն իրենց ընդդիմադիրներին մեղադրանքներ էին ներկայացնում, որոնք ընդդիմացողների հետ առնչություն չու-

35. Աժ-ում ՀՀ վարչապետի հայտարարության համաձայն կառավարությունը հրաժարվել է այս նախաձեռնությունից, օրենքի կիրարկման ապահովման հետ կապված տեխնիկական խնդիրների առկայության պատճառով:

ներին: Այսպես, եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխության և պրոգրեսիվից համահարթ համակարգի անցման գաղափարի կողմնակիցները պնդում են, որ այդպես բարձրակարգ մասնագետները կմեկնեն արտասահման աշխատելու: Առնվազն տարօրինակ է, որ մասնագետները, որոնք գործունեություն են ծավալել նախահեղափոխական Հայաստանում, ուր գործել են եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափերը, ապրել ու աշխատել են և չեն մտածել հեռանալու մասին, իսկ հիմա, հեղափոխությունից հետո, եթե եկամտային հարկի դրույքաչափերը պրոգրեսիվից չփոխվեն համահարթի՝ հեռանալու են:

Սա շանտաժի տպավորություն է թողնում: Եթե Հայաստանի քաղաքացիները մեկնեն արտասահման աշխատելու, քիչ է հավանական, որ դա պայմանավորված կլինի եկամտային հարկի դրույքաչափերով, քանի որ այն երկրների մեծ մասում, ուր Հայաստանի անկախացումից ի վեր ՀՀ քաղաքացիները հիմնականում արտագաղթել են³⁶, բացառությամբ՝ Ռուսաստանի, գործում են ավելի բարձր դրույքաչափեր և ավելի պրոգրեսիվ համակարգեր: ԱՄՆ-ում գործող եկամտային հարկի դրույքաչափերը ներկայացված են աղյուսակ 6-ում³⁷:

Աղյուսակ 6. ԱՄՆ եկամտային հարկի դրույքաչափերը 2018-2019թթ. ֆինանսական տարում

Դրույքաչափը	Անհատ	Ամուսնական զույգ
10%	Մինչև \$9,525	Մինչև \$19,050
12%	\$9,526 - \$38,700	\$19,051 - \$77,400
22%	\$38,701 - \$82,500	\$77,401 - \$165,000
24%	\$82,501 - \$157,500	\$165,001 - \$315,000
32%	\$157,501 - \$200,000	\$315,001 - \$400,000
35%	\$200,001 - \$500,000	\$400,001 - \$600,000
37%	\$500,000-ից ավելի	\$600,000-ից ավելի

Աղյուսակ 7. Կանադայի դաշնային իշխանություններին վճարվող եկամտային հարկի դրույքաչափերը 2019թթ. ֆինանսական տարվա եկամտի համար³⁸

Կանադական դոլար	2019թ. համար եկամտային հարկի սահմանային դրույքաչափերը			
	Այլ եկամուտներ	Կապիտալ եկամուտ	Շահաբաժիններ Կանադայում	
			հարկվող	Չհարկվող
Մինչև \$47,630	15.0%	7.50%	-0.03%	6.87%
\$47,630 - \$95,259	20.5%	10.25%	7.56%	13.19%
\$95,259 - \$147,667	26.0%	13.00%	15.15%	19.52%
\$147,667 - \$210,371	29.0%	14.50%	19.29%	22.97%
\$210,371-ից ավել	33.0%	16.50%	24.81%	27.57%

36. ԱՄՆ, Կանադա, ԵՄ անդամ պետություններ (հիմնականում Գերմանիա, Ֆրանսիա, Բելգիա և Հոլանդիա) և Ռուսաստան:

37. Ներկայացվում են հիմնական ցուցանիշները: Կարող են լինել նվազեցումներ և այլ կարգավորումներ: <https://www.forbes.com/sites/robertberger/2017/12/17/the-new-2018-federal-income-tax-brackets-rates/#8f6124e292a3>

38. Ներկայացվում են հիմնական ցուցանիշները: Կարող են լինել նվազեցումներ և այլ կարգավորումներ: <https://www.taxtips.ca/taxrates/canada.htm>

Աղյուսակ 8. 2018թ. ֆինանսական տարում գործող եկամտային հարկի դրույքաչափերը
Գերմանիա³⁹ Ֆրանսիա⁴⁰

Կի պրոգրեսիվ դրույքաչափի կողմնակիցները դեմ են բարձր աշխատավարձերին^{43 44}:

43. Հատված 2019թ. մարտի 27-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքից. «Ո՛վ է այդ բարձր աշխատավարձ ստացող մարդը: Դա այն մարդն է, որ գնացել է, համալսարանում առավոտից իրիկուն չարչարվել, գիշերները չի քնել, գնացել է սոված ուսանողի կարգավիճակում արտերկրում կամ Հայաստանում ժամանակ է անցկացրել, դարձել է բարձր մակարդակի պրոֆեսիոնալ և ստանում է 1-2 միլիոն դրամ աշխատավարձ: Մենք ոչ թե էդ մարդու հետևից պիտի ընկնենք, ասենք՝ այ, էդ ո՞նց ես բարձր աշխատավարձ ստանում: Մենք պետք է իրեն ցույց տանք որպես... Էն, որ ասում են՝ մեր ժամանակների հերոսը, մեր ժամանակների հերոսը ինքն է: Մարդը գնացել, չի պազել քույքերում, գնացել, կրթություն է ստացել»: (Հասու է <https://www.shantnews.am/news/view/325480.html> էջում):

44. Աժ-ում ՀՀ կառավարության ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին քննարկման ժամանակ պատասխանելով պատգամավորի հարցին՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ասել էր. «Շնորհակալ եմ: Շար կարևոր հարցեր եք բարձրացնում: Իրականում ավելի ծավալուն է թեման, քան 3 րոպեյվա մեջ պարասխանելը: Ես փորձեմ մի քանիսին ամբողջական պատասխանել: Առաջինը, գույքահարկի հետ կապված: Այո, մենք գույքահարկի ոլորտի բարեփոխումները մարտիի եք սինխրոն կերպով 2020թ. հունվարի 1-ից դնել գործարկման մեջ և, քանի որ ես ուզում եմ ցույց տալ սրա կապը եկամտային հարկի համահարթեցման գործընթացի մեր մտադրության հետ, որովհետև կա այդպիսի քննադատություն, որ փաստորեն մենք բարձր աշխատավարձերի համար եկամտահարկը իջեցնում ենք և դա դիտարկվում է որպես սոցիալական ոչ ճիշտ քաղաքականություն: Ես սրա հետ համաձայն չեմ, իհարկե: Հիմա կփորձեմ հիմնավորել ինչու, և երկրորդը, բայց ուզում եմ ասել, որ գույքահարկի համակարգը մենք փոխում ենք այնպես, որ հենց գույքահարկով պետք ա էդ սոցիալական հարկման արդարությունը մտնի: Որովհետև Հայաստանի Հանրապետությունում էնպիսի տրամադրություն կա, ասում են վայ բարձր աշխատավարձ ստացողների թիվը շատ ցածր ա: Էնպիսի տրամադրություն կա մենք բոլորս ընկել ենք բարձր աշխատավարձ ստացողների հետևից և ուզում ենք նրանց ներկայացնել որպես սոցիալական բևեռ, իբր դրանք հարուստներն են, և այլն, և այլն: Ես ուզում եմ պատասխանատու կերպով հայտարարել, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ ոք աշխատավարձով հարուստ և առավել ևս մեծահարուստ չի դարձել: Եվ ընդհակառակը, երբ որ խոսում ենք մեր երկրի տեսլականի մասին, այդ մեր կառավարության ծրագրում գրված ա, որ մենք խրախուսելու ենք բարձր աշխատավարձի քաղաքականությունը: Էսօր մարդիկ կան ասում են վայ էդ ինչ վար քաղաքականություն եք վարում: Էկեք հենց անենք, որ 80000 դրամ աշխատավարձ ստացող քաղաքացին, էդ իրա 80000 դրամով լավ ապրի: Մենք ասում ենք դա կեղծ դիրքորոշում ա, որովհետև մենք չենք ուզում, որ պայքարենք նրա համար, որ Հայաստանի Հանրապետությունում մարդը շարունակի 80000 դրամ աշխատավարձ ստանալ ու մենք էնպես անենք, որ մի քիչ լավ ապրի: Մենք ասում ենք Հայաստանի ռազմավարական տեսլականը որն ա: Հայաստանի Հանրապետությունում, կներեք կոպիտ բառիս համար, էժան աշխատուժ պետք ա չլինի, Հայաստանի Հանրապետությունում պետք ա լինի բարձր որակավորում ունեցող աշխատուժ, որը ստանում ա բարձր աշխատավարձ: Եվ մենք այդ, բարձր աշխատավարձերի համար եկամտային հարկը իջեցնում ենք էս ուղերձը հղելու համար: Բա մենք մյուս կողմից ասում ենք մենք ուզում ենք տեխնոլոգիական երկիր դառնանք: Մյուս կողմից տեխնոլոգիական ոլորտի բարձր աշխատավարձերի վրա էնքան հարկ ենք դնում, որ ոչ մեկ չուզենա Հայաստանում ներդրում անի: Ես ուզում եմ շատ հստակ ասեմ, էդ 80000 դրամ աշխատավարձը պաշտպանողների հետ որևէ կերպ համաձայն չենք: Մենք մեր մարդկանց պետք է մղենք կրթության: Մենք մեր մարդկանց պետք ա մղենք պրոֆեսիոնալ հմտությունների աճեցման: Հայաստանի Հանրապետությունում չպիտի մարդ լինի, որ ինքը մտածի որ կարա 80000 դրամով կարա աշխատի: Հայաստանի Հանրապետությունում չպետք ա մարդ լինի, որ ինքը մտածի, գործապու լինի, որ Հայաստանի Հանրապետությունում 80000 դրամով պետք ա մարդ աշխատանքի ընդունի, էդքան աշխատավարձ տա ու ինքը մտածի, որ ինքը աշխատավարձ ա տվել» և հետագայում՝ «Առաջինը, ես էդ գաղափարը ընդհանրապես չեմ կիսում որ էդ որ ասում են ... Հենց տրամադրություն ա, որ էս երկրի թշնամի սկսել են մեկ էլ դարձնել բարձր աշխատավարձ ստացող մարդուն: Ո՛վ ա էդ բարձր աշխատավարձ ստացող մարդը: Դա էն մարդն ա, որ գնացել ա համալսարանում առավոտից իրիկուն չարչարվել ա, քշերները չի քնել, գնացել ա սոված ուսանողի կարգավիճակում արտերկրում կամ Հայաստանում ժամանակ ա անցկացրել, դարձել ա բարձր մակարդակի պրոֆեսիոնալ և ստանում ա մի միլիոն, երկու միլիոն դրամ աշխատավարձ: Մենք ոչ թե էդ մարդու հետևից պիտի ընկնենք ասենք, ա էդ ո՞նց էս բարձր աշխատավարձ ստանում: Մենք պետք ա իրան ցույց տանք, որ էդ որ ասում եմ մեր ժամանակների հերոսը, մեր ժամանակների հերոսը ինքն ա: Բա մարդը գնացել ա չի պազել քույքերում, գնացել ա կրթություն ա ստացել: Հմի էդ մարդուն ասում ենք, արա, հա էդ ինչ էրկու միլիոն դրամ աշխատավարձ ես ստանում: Արի սրեղ իլա: 30 տոկոս դնենք աշխատավարձիդ կեսը վերցնենք: Ոչ, մենք ասում ենք մեր երկրում բոլորը պետք ա լինեն էդպես: Մեր երկրում ոչ թե քույքերի պիտի պազեն գողականից ու ճշպից խոսան, պիտի գնան համալսարան, դպրոց կրթություն ստանան: Էս ա նոր Հայաստանը: Որևէ մեկը այլ բանի հույս չունենա: Հակառակ դեպքում էս փոփոխությունները անիմաստ են: Ինչ մենք երկրում հեղափոխություն ենք արել, որ սևագործ բանվորների հասարակություն լինենք: Ոչ, էսպեղ լինելու ա բարձր տեխնոլոգիական կրթություն, բարձր կրթություն, բարձր մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացիների հասարակություն ենք մենք ուզում ստեղծել: Եվ էս ա մեր քաղաքականությունը: Եվ պետք չի կեղծ սոցիալական կարգախոսներով, թե իբր բան ենք անում, վայ պայքարենք, որ 80000 դրամ աշխատավարձ ստացողը իրեք հարյուր դրամ պակաս հարկ վճարի: Էդ իրեք հարյուր դրամը պահեք ձեզ: Մենք պետք ա աշխատենք, որ 80000 դրամ ստացող մարդ չլինի էս երկրում: Պետք ա մեր երկրում աշխատավարձերը կրկնակի, եռակի, քառակի, հնգակի աճեն: Եվ դրա համար, այդ, մենք բարձր աշխատավարձերի հարկը պիտի նվազեցնենք: Դրանով խրախուսենք բարձր աշխատավարձը:»

Սա եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափերի կողմնակիցների կողմից արտահայտված տեսակետների մանիպուլյացիա է: Եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափերի կողմնակիցներն ի սկզբանե չեն կարող դեմ լինել բարձր աշխատավարձերին, քանի որ բարձր աշխատավարձերի դեպքում պրոգրեսիվ եկամտային հարկի կիրառումը թույլ կտա լրացուցիչ միջոցներ կուտակել պետական բյուջեում և դրանք ուղղել կրթական, առողջապահական, սոցիալական և հասարակության խոցելի խրմբերի համար կարևոր ծախսերի ֆինանսավորմանը:

Քննադատության չի դիմանում ԱՄՀ դիրքորոշումը: Մի կողմից ԱՄՀ հայաստանյան առաքելության ղեկավար Հոսեյն Սամիեիին ԱՄՀ անունից կոչ էր արել հետագա ջանքեր գործադրել հարկային վարչարարությունը բարելավելու և հարկերից խուսափելու խորը արմատավորված սովորույթի դեմ պայքարի ուղղությամբ, մյուս կողմից հանգիստ է ընդունում ՀՀ իշխանությունների այն փաստարկը, որ եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափի համակարգը եկամուտների վերաբաշխման նպատակին չի ծառայում, քանի որ բարձր եկամուտ ունեցող անձինք խուսափում են հարկեր վճարելուց: *Սա նույնն է, թե իշխանությունն ասի, որ թանկարժեք մեքենա վարող քաղաքացիները չեն ենթարկվում երթևեկության կանոններին, հեղուաբար պետք է փոխել երթևեկության կանոնները:* Բիզնես էլիտայի կողմից չվճարվող ուղղակի հարկերի և տուրքերի մեծությունը Համաշխարհային բանկը (World Bank 2015b) գնահատում է ՀՆԱ 1.4-2.6%-ի չափով:

Անհասկանալի է, թե ինչու միջազգային կառույցի ղեկավարը ՀՀ իշխանություններին կոչ չի անում հարկերի դրույքաչափերը փոխելու փոխարեն պայքարել բարձր եկամուտ ունեցող անձանց կողմից եկամտային հարկից խուսափելու այդ խորը արմատավորված սովորույթի դեմ և բարելավել եկամտային հարկի հավաքագրման վարչարարությունը: ԱՄՀ հրապարակման համաձայն, չնայած հարկային քաղաքականության միջոցով ներդրումները խթանելու փորձերը տարածված են աշխարհում, փաստերը վկայում են, որ լրացուցիչ⁴⁵ ներդրումներ ներգրավելու հարցում այդ քաղաքականությունների արդյունավետությունը կասկածելի է (Tanzi and Zee 2001):

ԱՄՀ հրապարակումը նաև նշում է, որ հարկային «խթանների» նպատակ հանդիսացող օտարերկրյա ներդրողները, իրենց ներդրումային որոշումները կայացնում են գործոնների մի ամբողջ խումբ հաշվի առնելով, ինչպես, օրինակ, բնական ռեսուրսները, քաղաքական կայունությունը, կարգավորման թափանցիկ համակարգը, ենթակառուցվածքների և հմուտ աշխատուժի առկայությունը և այլն, որոնց թվում հարկային «խթանները» հիմնականում ամենակարևոր գործոնների թվում չեն: Հարկային գործոնները կարող են ամենևին արդյունավետ չլինել օտարերկրյա ներդրումների դեպքում, քանի որ դրանց իրական շահառուն կարող է լինել ոչ թե ներդրողը, այլ օտարերկրյա կառավարությունը, որը կարող է շահութահարկ գանձել օտարերկրյա ներդրողի գործունեության երկրում շահութահարկի գործող դրույքաչափերի և Հայաստանում գործող դրույքաչափերի տարբերության չափով:

45. Լրացուցիչ ներդրումների այն մակարդակի համեմատ, որ երկիրը կարող էր ներգրավել, եթե չփորձեր ներդրումների ներգրավման նպատակով հարկային քաղաքականությունն ավելի «խթանող» դարձնել:

ՀՀ Հարկային օրենսգիրքն ունի այդպիսի դրույթ (Հոդված 20. Կրկնակի հարկի բացառումը), որի համաձայն ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների և ռեզիդենտ անձանց կողմից ՀՀ-ից դուրս ստացված կամ ստացման ենթակա շահութահարկի և եկամտային հարկի հարկման օբյեկտները ներառվում են այդ կազմակերպությունների և ֆիզիկական անձանց՝ համապատասխան հարկատեսակով հարկման օբյեկտի մեջ և ենթակա են հարկման ՀՀ-ում: Հարկման օբյեկտների գծով հաշվարկված հարկերի գումարները նվազեցվում են համապատասխան հարկերի այն գումարների չափերով, որոնք այդ կազմակերպություններից և ֆիզիկական անձանցից գանձվել են օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան: Հարկերի գումարները նվազեցվում են օտարերկրյա պետություններում ձևավորվող հարկման օբյեկտներից «Հարկային օրենսգրքով» սահմանված կարգով և դրույթաչափերով հաշվարկվող համապատասխան հարկերի գումարները չգերազանցող չափերով: Եթե նվազեցման ենթակա շահութահարկի կամ եկամտային հարկի գումարը գերազանցում է տվյալ տարվա արդյունքներով առաջացած՝ համապատասխանաբար շահութահարկի կամ եկամտային հարկի պարտավորությունը, ապա հարկերի գերազանցող գումարները ենթակա են նվազեցման կազմակերպության կամ ֆիզիկական անձի հաջորդ հաշվետու տարիների համապատասխան հարկատեսակի պարտավորությունից:

Ի լրումն վերը թվարկվածի, պետք է նշել, որ ԱՄՀ-ն Հայաստանի դեպքում թերացել է և չի կատարել հարկային «խթանների» արդյունավետ և ավելի լավ օգտագործման վերաբերյալ անդամ երկրներին խորհրդատվություն տրամադրելու վերաբերյալ իր առաքելությունը, որի վերաբերյալ նրան, ինչպես նաև ՏՀԶԿ-ին, ՄԱԿ-ին և Համաշխարհային բանկին խնդրել էր G20-ի Զարգացման աշխատանքային խումբը (IMF 2015a):

XXI դարում երկրներն իրենց մրցունակությունը բարելավում են աշխատանքի արտադրողականության բարձրացման միջոցով, որին հիմնականում հասնում են նոր տեսակի ապրանքներ արտադրելու, ծառայություններ մատուցելու և աշխատանքներ կատարելու, այդ ապրանքների արտադրության, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման պրոցեսում նոր տեխնոլոգիաների օգտագործման, աշխատանքների կազմակերպման նոր եղանակների կիրառմամբ: Հարկային դրույթաչափերի նվազեցումը, ազգային արժույթի արհեստական արժեզրկումը, մրցունակությունը բարելավելու հին մեթոդներ են, որոնք օգտագործվել են XX դարում, սակայն ոչ միշտ է, որ արդյունավետ են եղել (Porter 1998):

Հարկային օրենսգրքի փոփոխությունները ՀՀ ֆինանսների նախարարությունը հիմնավորել է ՀՀ կառավարության ծրագրում «ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելու և այն որոշակիորեն անուղղակի հարկերի վրա տեղափոխելու» դրույթի առկայությամբ (Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք 2019): Նման քաղաքականությունն իմաստ ունի ՏՀԶԿ անդամ երկրներում, ուր ուղղակի (շահութահարկ և եկամտահարկ) և անուղղակի (ԱԱՀ և ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարվող այլ հարկեր) հարկերը մոտավորապես հավասար են (յուրաքանչյուրն ընդհանուր եկամուտների մոտավորապես 33%-ը), իսկ սոցի-

ալական ծախսերի մի մասը՝ կենսաթոշակային, առողջապահական և գործազրկության ապահովագրության և այլ ծառայությունների ֆինանսավորումն իրականացվում է սոցիալական ապահովագրության վճարների միջոցով: Հայաստանում անուղղակի հարկերը՝ ԱԱՀ և ակցիզային հարկը կազմում են համախառն բյուջեի եկամուտների 41.3%-ը (2010թ.՝ 49%) և պետական բյուջեի եկամուտների 42.0%-ն, այն դեպքում, երբ ձեռնարկությունների կողմից վճարվող շահութահարկի և քաղաքացիների կողմից վճարվող եկամտային հարկի կամ եկամտահարկի գծով եկամուտները կազմում են համախառն բյուջեի եկամուտների 38.1%-ը (2010թ.՝ 21%): Այսինքն, ՀՀ-ում հաջողվել է վերջին տարիներին նվազեցնել ԱԱՀ-ից և ակցիզային հարկից պետական բյուջեի եկամուտների մեծ կախվածությունը: ՀՀ կառավարության կողմից առաջարկվող փոփոխություններն ավելի կմեծացնեն ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կշիռը համախմբված և պետական բյուջեներում, կնվազեցնեն բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացիան և դրանով պետական բյուջեն ավելի մեծ կախվածության մեջ կդնեն անուղղակի հարկերից, ինչը խիստ ռիսկային է, քանի որ սպառման ցանկացած էական անկում բացասաբար կազդի բյուջեի եկամուտների վրա: Այսինքն, ՀՀ քաղաքացիները կարող են ստանալ եկամուտ և չուղղեն այն ՀՀ-ում սպառմանը:

Պետական բյուջեն արդեն իսկ մեծ ծավալով պարտավորություններ է կուտակել տնտեսավարողների նկատմամբ, որոնց զգալի մասը, Համաշխարհային բանկի հրապարակումների համաձայն, անուղղակի հարկերի գծով է: Վերջին 20 տարում անուղղակի հարկերը մշտապես հանդիսացել են պետական բյուջեի եկամուտների հիմնական աղբյուրներից մեկը և բյուջեի եկամուտների ծրագիրը կատարելու համար հարկային մարմինները հաճախ գործարարներին պարտադրել են կանխավճարներ կատարել: Այժմ ՀՀ կառավարությունը որդեգրել է «ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելու և այն որոշակիորեն անուղղակի հարկերի վրա տեղափոխելու» քաղաքականություն, ինչը նշանակում է, որ բյուջեի եկամուտների աղբյուրները բազմազանեցնելու և մեկ-երկու հարկերից՝ ԱԱՀ-ից և ակցիզային հարկից բյուջեի եկամտային մասի կախվածությունը նվազեցնելու փոխարեն կառավարությունն ավելի է մեծացնում այդ երկու հարկատեսակներից բյուջեի եկամուտների կախվածությունը: Դրանով կառավարությունը մեծացնում է բյուջեի եկամուտների կատարման հետ կապված ռիսկերը և ստեղծում է խնդիր, քանի որ սպառման կրճատումը կհանգեցնի եկամուտների ավելի մեծ անկման, քան կարող էր լինել, եթե բյուջեի եկամուտներն ավելի դիվերսիֆիկացված լինեին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը երկու անգամ օրենքի փոփոխությունների և լրացումների նախագիծը հրապարակել է www.e-draft.am կայքում: Էլեկտրոնային եղանակով հաղորդակցությունը ողջունելի է և շահառուներին հնարավորություն է տալիս իրենց կարծիքը հասցնել պետական մարմիններին: Սակայն էլեկտրոնային հարթակները չեն կարող փոխարինել առերես քննարկումներին, իսկ www.e-draft.am հարթակում ՀՀ ֆինանսների նախարարության որոշ պատասխաններ կրել են ձևական բնույթ և մի շարք դեպքերում կրկնվել են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը խուսափել է օրենքի նախագծի առանձին կետերն իր ընդիմախոս-

ների հետ դեմ առ դեմ քննարկելուց, հիմք է տալիս պնդելու, որ հարկային օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունների մշակման և քննարկման գործընթացը եղել է ոչ մասնակցային:

Հարկային օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները փոքր ազդեցություն կունենան մինչև 150 հազար դրամ եկամուտ ունեցող վարձու աշխատողների եկամուտների վրա: 2 միլիոն դրամ աշխատավարձ ստացող վարձու աշխատողի տարեկան եկամուտը 2023թ. 2019-ի համեմատ կավելանա 1 միլիոն 830 հազար դրամի չափով: Այսինքն, այս մակարդակի աշխատավարձ ստացող վարձու աշխատողների եկամուտների աճն ավելին կլինի, քան մինչև 150 հազար դրամ եկամուտ ստացողների ամբողջ տարեկան եկամուտը: Ամսական 9 միլիոն դրամ աշխատավարձ ստացող վարձու աշխատողի տարեկան եկամուտը 2023թ. 2019-ի համեմատ կավելանա 31,355 դոլարով:

Թավշյա, ոչ բռնի հեղափոխությունից հետո իշխանության եկած կառավարությունը պարբերաբար շեշտում է տնտեսական հեղափոխություն իրականացնելու անհրաժեշտության մասին: Նոր կառավարության ղեկավարն ու առանձին անդամներ անտեսում, իսկ առանձին դեպքերում ուղղակի անտագոնիստական և արհամարհական վերաբերմունք են ցուցաբերում «սոցիալական արդարության» գաղափարի նկատմամբ՝ այլափոխելով իրենց կարծիքներից տարբեր կարծիք ունեցողների տեսակետները և նրանց ներկայացնելով որպես «աղքատության կողմնակիցներ»: Պետք է հիշել, որ Հայաստանում թավշյա, ոչ բռնի հեղափոխություն տեղի ունեցավ 2018թ., այն դեպքում, երբ 2017թ. ՀՀ տնտեսությունն արձանագրել էր համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո ամենաբարձր աճի տեմպը: Սա նշանակում է, որ հեղափոխության պատճառը տնտեսական աճի ոչ բավարար տեմպերը չէին, այլ հասարակության մի մեծ խմբի մոտ այդ աճի արդյունքների վերաբաշխման և բազմաթիվ այլ հարցերի հետ կապված անարդարության սուր զգացումը: Եկամտային հարկի համահարթ դրույքաչափին անցումը կխորացնի երկրում ստեղծվող տնտեսական արդյունքի վերաբաշխման հետ կապված Հայաստանում արդեն իսկ գոյություն ունեցող խնդիրները:

Իր եկամուտները դիվերսիֆիկացնելու փոխարեն ՀՀ կառավարությունը նախաձեռնում է փոփոխություններ, որոնք պետական բյուջեի տեսակետից ավելի կմեծացնեն անուղղակի հարկերի դերը, այն դեպքում, երբ 2018թ. ամռանը Համաշխարհային բանկը նշել է, որ «անուղղակի հարկերն ապահովել են հավաքվող հարկերի գերակշիռ մասի աճը», պետական բյուջեի եկամուտները կդարձնեն ավելի քիչ դիվերսիֆիկացված, անուղղակի հարկերի՝ ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գծով հավաքագրումները կլինեն ավելի մեծ և պետական բյուջեի եկամուտների ավելի մեծ մասը կկազմեն՝ նվազեցնելով պետական բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացիան և ավելացնելով դրանց հետ կապված ռիսկերը:

Ժամանակակից տնտեսության շարժիչ ուժը գիտելիքների և հմտությունների մեծ պաշար, նորարարական մտածողություն ունեցող, լավ վարձատրվող աշխատակիցն է: Վերը նշված հատկանիշները նույնականացվում են արևմտյան կրթության հետ: Սակայն, որպեսզի նոր սերունդը կարողանա բարձրորակ կրթություն ստանալ

արևմտյան բուհերում, նա պետք է բարձրորակ կրթություն ստանա Հայաստանի հանրակրթության մակարդակում: Մինչդեռ ՀՀ իշխանությունների կողմից տարվող քաղաքականության արդյունքում վերջին 20 տարում հանրակրթության որակն էականորեն ընկել է, ինչը ՀՀ ապագա աշխատուժին զրկում է բարձրակարգ մասնագետ դառնալու և ապագայում բարձր եկամուտներ ստանալու հնարավորությունից: Այս պայմաններում անցած 10 ամսվա ընթացքում հանրակրթության որակը բարելավելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացման ուղղությամբ զարգացում ցույց տալու և դրա համար անհրաժեշտ ֆինանսավորման միջոցների ծավալները գնահատելու և աղբյուրները մատնանշելու փոխարեն ՀՀ կառավարությունը վերցրել է արդեն իսկ բարվոք վիճակում գտնվող քաղաքացիների բարեկեցությունը ավելի բարելավելու քաղաքականություն: Այդ քաղաքականությունը չի բարելավելու ավելի պակաս բարենպաստ պայմաններում գտնվող քաղաքացիների կյանքը և նրանց չի տալու ավելի բարձր եկամուտներ ստանալու համար անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ:

Եկամտային հարկի համահարթ դրույքաչափերի կողմնակիցները նշում են, թե իբր Հայաստանում ներդրումներ կատարել ցանկացողները բողոքում են, որ պրոգրեսիվ հարկման համակարգի շրջանակներում կատարվող հաշվարկները բարդ են իրենց համար: Ներկայումս գործող պրոգրեսիվ հարկման համակարգի շրջանակներում աշխատավարձի 3 պայմանական մակարդակների դեպքում կատարվող հաշվարկները ներկայացված են ստորև:

Աշխատավարձ	Հարկի մեծության հաշվարկ	Առձեռն ստացվող եկամուտ
149 000 դրամ	$149000 \times 23\% = 34270$	$149000 - 34270 = 114730$
1 950 000 դրամ	$34500 + (1950000 - 1500000) \times 28\% = 538500$	$1950000 - 538500 = 1411500$
9 950 000 դրամ	$552500 + (9950000 - 2000000) \times 36\% = 3414500$	$9950000 - 3414500 = 6535500$

Նման պնդումները հատկապես արժանահավատ չեն, եթե հաշվի առնենք, որ ՀՀ իշխանությունները պնդում են, որ ցանկանում են Հայաստան ներգրավել տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններ և ներդրողներ: Եթե վերը նշված հարշվարկները բարդ են Հայաստանում ներդնել ցանկացող գործարարների համար, ապա ինչպես են նրանք մշակելու գործարար և ներդրումային ծրագրեր, ինչպես են կատարելու իրենց ներդրումային ծրագրերի հետ կապված դրամական հոսքերի հաշվարկները: Ի լրումն, պետք է նաև հաշվի առնել, որ վերը նշված հաշվարկները XXI դարում կատարվում են մասնագիտական հաշվապահական ծրագրերի միջոցով և գործարարներից ձեռքով հաշվարկների կատարում չեն պահանջում:

5. Եզրակացություններ

Վերը ներկայացված վերլուծությունները հանգեցնում են հետևյալ եզրակացություններին՝

- 1) ՀՀ կառավարությունը հրաժարվում է եկամտային հարկի դրույքաչափերի պրոգրեսիվությունից: Օգտակար է հիշել, որ «պրոգրեսիվ» հայերեն նշանակում է «առաջադիմական»: ՀՀ իշխանությունները հրաժարվում են ավելի առաջադիմական հարկման համակարգից, որը գործում է ՏՀԶԿ անդամ մի շարք երկրներում:
- 2) Անընդունելի է ՀՀ իշխանությունների այն փաստարկը, որ եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափի համակարգը եկամուտների վերաբաշխման նպատակին չի ծառայում, քանի որ բարձր եկամուտ ունեցող անձինք խուսափում են հարկեր վճարելուց: Եթե բարձր եկամուտ ունեցող անձինք խուսափում են հարկեր վճարելուց, պետք է ոչ թե փոխել օրենսդրությունը, այլ բարելավել հարկային վարչարարությունը:
- 3) Ուղղակի հարկերի գծով հարկային բեռը նվազեցնելու և այն անուղղակի հարկերի վրա տեղափոխելու ՀՀ կառավարության գաղափարն անընդունելի է, քանի որ նվազեցնում է պետական բյուջեի եկամուտների դիվերսիֆիկացիան և մեծացնում ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հետ կապված ռիսկերը:
- 4) ՏՀԶԿ անդամ երկրների 1982-2009թթ. տվյալներն օգտագործելով Attinasi-ն, Checherita-Westphal-ը և Rieth-ը (2011) եզրակացրել են, որ այլ հավասար պայմաններում, եկամտային հարկի ավելի պրոգրեսիվ համակարգ ունեցող երկրներն ունեցել են ավելի հզոր ավտոմատ կայունարարներ, որը տնտեսական անկումների ժամանակաշրջաններում հանդիսանում է այդ անկման դեմ պաշտպանության առաջին միջոցը:
- 5) Հարկային օրենսդրության առաջարկվող փոփոխություններից էականորեն շահում են ամենամեծ եկամուտներ ունեցող վարձու աշխատողները: Համեմատաբար ցածր, մինչև 150 հազար դրամ եկամուտ ունեցող վարձու աշխատողների ամսական եկամուտների աճը շատ փոքր կլինի:
- 6) Եկամտային հարկի համահարթ դրույքաչափին անցումը կխորացնի երկրում ստեղծվող տնտեսական արդյունքի վերաբաշխման հետ կապված Հայաստանում արդեն իսկ գոյություն ունեցող խնդիրները:
- 7) Եկամտային հարկի համահարթ դրույքաչափին անցումը և դրույքաչափերի իջեցումը չի բարելավելու ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների եկամուտները, նրանց երեխաներին հնարավորություն չի տալու որակյալ միջնակարգ կրթություն ստանալ ՀՀ դպրոցներում, բարձրագույն կրթություն արևմտյան բուհերում և նրանց բացարձակ մեծամասնությունը հնարավորություն չի ունենալու մտնել բարձր եկամուտ ունեցող վարձու աշխատողների շարքերը:
- 8) Եկամտային հարկի համահարթ դրույքաչափի ներմուծման միջոցով ստվերը կրճատելու փորձը կարող է արդյունավետ չլինել, եթե գործատուները չվստահեն կառավարությանը: Գործարարներն արդեն իսկ դառն փորձ ունեն գործող կա-

ռավարության հետ, որը հաշվապահների, խորհրդատուների և իրավաբանների գործունեության հարկային կարգավորումները փոփոխելու միջոցով իրականում փորձեց ավելացնել վերը նշված խմբերից գանձվող հարկերը: Վերը նշված խմբի մի շարք գործարարներ հարկային դաշտ էին մտել 2013թ. հետո, երբ ներդրվել էր շրջանառության հարկի և հարկային մարմինն պարզեցված հաշվետվություններ ներկայացնելու համակարգը: Հասարակության մի լայն խմբի բացասական արձագանքի արդյունքում ՀՀ կառավարությունը հրաժարվեց այս փոփոխությունից՝ պատճառաբանելով, որ իրականում այս անցումը նույնիսկ չէր կարող կատարվել, քանի որ հարկային մարմինը չունեի համապատասխան ծրագրային ապահովում: Սակայն բարձր եկամուտ ունեցող և իշխանությունների կարծիքով «ստվերային» բարձր եկամուտներ ունեցող կամ վճարող գործատուների համար սա նշան էր, որ չի բացառվում, որ երբ կառավարությունը կեզրակացնի, որ այդ գործատուների մեծամասնության կողմից կատարվող «ստվերային» վճարումների մեծ մասն արձանագրվել է «դիտարկվող» տնտեսությունում, կբարձրացնի հարկերի դրույքաչափերը կամ նորից կներմուծի պրոգերսիվ դրույքաչափեր: Այդ առումով, համահարթ հարկի ներդրման միջոցով աշխատավարձերի «ստվերային» հատվածը կրճատելու փորձը կարող է ցանկալի արդյունքի չհանգեցնել:

- 9) Եկամտային հարկի պարզեցումը ներդրողների համար գրավիչ համարող պաշտոնյաների փաստարկները տպավորություն են ստեղծում, որ (1) հնարավոր ներդրողները չունեն պարզ հաշվարկներ կատարելու համար անհրաժեշտ տարրական մաթեմատիկական գիտելիքներ և (2) չկան հաշվապահական հաշվառումը ավտոմատացնող համակարգչային ծրագրեր:

6. Առաջարկություններ

Առաջարկում ենք.

- 1) Փոփոխության չենթարկել եկամտային հարկի պրոգրեսիվությունը և դրույքաչափերը և այն 27-37 միլիարդ դրամ եկամուտը, որից ՀՀ կառավարությունը ցանկանում է հրաժարվել, առաջիկա տարիներին ուղղել կրթության համակարգ՝ շեշտակիորեն բարելավելով հանրակրթության և բարձրագույն կրթության որակը, ցածր եկամուտ ունեցող ընտանիքների ներկայացուցիչներին հնարավորություն տալով ընդունվել և սովորել առաջնակարգ արտասահմանյան բուհերում:
- 2) Չհրաժարվել եկամտային հարկի պրոգրեսիվությունից, քանի որ այլ հավասար պայմաններում եկամտային հարկի ավելի պրոգրեսիվ դրույքաչափերի համակարգը տնտեսական անկման ժամանակաշրջանում հանդիսանում է առաջին ավտոմատ կայունարարը:
- 3) Եկամտային հարկի պրոգրեսիվությունը բարելավելու նպատակով ներդնել նոր շեմ 50% դրույքաչափով:
- 4) Սահմանել չհարկվող շեմ:
- 5) Միջնաժամկետ հեռանկարում նախապատրաստել և ներդնել եկամուտների հայտարարագրման համապարփակ համակարգ, ինչը պետք է ուղեկցվի հարկային մարմինների աշխատանքի էական արդիականացման և վերլուծական հմտությունների մեծացման գործընթացով և հասարակության հետ հարկային մշակույթի փոփոխությանն ուղղված քաղաքական աշխատանքով:
- 6) Հարկային օրենսդրության մեջ նախատեսվող փոփոխությունների մշակման և քննարկման գործընթացը դարձնել մասնակցային:

Օգտագործված աղբյուրներ

Սողոմոնյան, Վահրամ. (2018). Համահարթեցումը հակասում է համերաշխությանը և վտանգում տնտեսական աճը, Քաղաքական դիսկուրս հանդես, հասանելի է հետևյալ հղումով՝ <http://diskurs.am/wp-content/uploads/2018/12/Paper-Progressive-VSoghomonian.pdf> :

ՄԱԿ. (2016). Կայուն զարգացման նպատակներ. Հասու է <http://www.un.am/hy/p/sustainabledevelopmentgoals>: Դիտվել է 2019թ.-ի մարտի 28-ին:

Հարկային համակարգ, արդարություն և տնտեսական զարգացում. Համաժողովի նյութեր (Երևան, 12.02.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ <http://diskurs.am/2019/03/1084/> :

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք. (2019). Աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1475/justification>

Taxation, Justice and Economic Development. Conference Summary (Yerevan, 12.02.2019), available at <http://diskurs.am/2019/03/1088/> :

Ambrus, Attilane. (2012). The Advantages and Backdraws of the flat-rate personal income tax. Journal of International Studies, Vol. 5. №2, 2012, pp. 45-57.

Attinasi, Maria-Grazia; Checherita-Westphal, Cristina և Rieth, Malte. (2011). Personal Income Tax Progressivity and Output Volatility: Evidence from OECD Countries. European Central Bank. Working Paper Series №1380, September 2011.

Barreix, A., and J. Roca (2007). “Strengthening a Fiscal Pillar: the Uruguayan Dual Income Tax.” *CEPAL Review* 92 (August): 121–40.

Bird, Richard, M. (2009). The Personal Income Tax. The World Bank PREM notes. June 2009, №137.

Blinder, Alan S. (1981). Thoughts on the Laffer Curve. Federal Reserve Bank of St. Louis.

Dabla-Norris, Era; End, Nicolas; Rahim, Fazeer; Zohrab, John, and Crooke, Matt. (2017). Republic of Armenia: Upgrading Fiscal Rules. IMF Technical Assistance Report 17/330. June 2017. Available at <https://www.imf.org/en/Publications/CR/Issues/2017/11/10/Armenia-Technical-Assistance-Report-Upgrading-Fiscal-Rules-45364>

Davoodi, Hamid, and Grigorian, David. (2007). Tax Potential vs. Tax Effort: A Cross-Country

Dalsgaard, Thomas. (2008). Tax and Welfare Reforms in the Czech Republic – Structural Implications and Challenges. IMF WP/08/52, March 2008. Հասու է <https://www.imf.org/en/Publications/WP/Issues/2016/12/31/Tax-and-Welfare-Reforms-in->

[the-Czech-Republic-Structural-Implications-and-Challenges-21756](#) էջում:

Deloitte. (2017). Taxation and Investment in Japan 2017 http://www.iberglobal.com/files/2018-2/japan_deloitte_guide.pdf

El-Ganainy, A. And Weber, A. (2010) Estimates of the Output Gap in Armenia with Applications to Monetary and Fiscal Policy. IMF Working Paper 10/197.

Gracia, Borja; Floerkemeier, Holger և Darius, Reginald. (2008). “Enhancing Fiscal Policy in Armenia,” Selected Issues Paper, IMF Country Report No. 08/375 (Washington: International Monetary Fund <https://www.imf.org/external/pubs/ft/scr/2008/cr08375.pdf>).

Gray, Cheryl; Lane, Tracey, and Varoudakis, Aristomene. (2007). Fiscal Policy and Economic Growth: Lessons for Eastern Europe and Central Asia. The World Bank 41174

IMF. (2007). Analysis of Armenia’s Stubbornly Low Tax Collection. IMF Working Paper 07/106 International Monetary Fund <https://www.imf.org/external/pubs/ft/wp/2007/wp07106.pdf>.

IMF. (2015). Options for low income countries’ effective and efficient use of tax incentives for investment.

IMF. (2015a). OPTIONS FOR LOW INCOME COUNTRIES’ EFFECTIVE AND EFFICIENT USE OF TAX INCENTIVES FOR INVESTMENT. Հասն է <https://www.imf.org/external/np/g20/pdf/101515.pdf> էջում:

IMF. (2017). Tackling Inequality. Fiscal Monitor October 2017. Available at <https://www.imf.org/en/Publications/FM/Issues/2017/10/05/fiscal-monitor-october-2017>

Keen, Michael, Kim, Yitae and Varsano, Ricardo. (2006). The “Flat Tax(es)”: Principles and Evidence. IMF WP/06/218

Kunzel, Peter; de Imus, Phil; Gemayel, Edward; Herrala, Risto; Kireyev, Alexei; and Talishli, Farid. (2018). Opening Up in the Caucasus and Central Asia: Policy Frameworks to Support Regional and Global Integration (advanced copy). <file:///C:/Users/User/Downloads/45910mcd1807-dp-opening-ccar.pdf>

Lora, E., and M. Cardenas (2006). “La reforma de las instituciones fiscales en América Latina.” Inter-American Development Bank, Research Department, Documento de Trabajo #559, April.

Norregaard, John and Khan, Tehmina S.. (2007). Tax Policy: Recent Trends and Coming Challenges. IMF WP/07/274

Porter, Michael. (1998). On Competition. Harvard Business Review Book.

Tanzi, Vito, and Zee, Howell. (2001). Tax Policy for Developing Countries. ECONOMIC ISSUES №27. Available at <https://www.imf.org/external/pubs/ft/issues/issues27/>

Tax Justice Network. (2010). Available at <https://taxjustice.blogspot.com/2010/05/imf-and-romania-tackle-flat-tax-failure.html> [Accessed 26 March 2019]

Tevdovski, Dragan. (2019). Flat or progressive? The Macedonian experience. Presentation during «Taxation, Justice and Economic Development» Conference. Yerevan, 12 February, 2019.

World Bank. (2014). Republic of Armenia. Public Expenditure Review: Expanding the Fiscal Envelope. <http://documents.worldbank.org/curated/en/264471468005435366/Armenia-Public-expenditure-review-expanding-the-fiscal-envelope>

World Bank. (2018). An Opportunity to Unlock Armenia's Potential. Armenia Country Economic Update, Summer 2018.

World Bank. (2018b). A Window of Opportunity to Tackle Challenging Reforms. Armenia: Country Economic Update. Fall/winter 2017-2018.

World Bank. (2017). Future Armenia: Connect, Compete, Prosper. A Systematic Country Diagnostic.

World Bank. (2016). Republic of Armenia: Programmatic Fiscal Work. Report №ACS18362. 2016.

World Bank. (2015). Country Economic Memorandum, "Drivers of Dynamism".

World Bank. (2015b). Republic of Armenia: Drivers of Dynamism. Report №97520. June 2015.

World Bank. (2014b). Armenia: Cloudy Outlook. Armenia Economic Report №6. Fall 2014.

World Bank. (2013). Republic of Armenia: Accumulation, Competition, and Connectivity. April 2013.

Ծրագրի նախաձեռնողներ



Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամ՝

Հիմնադրամ հանուն սոցիալ-դեմոկրատիայի

Ֆրիդրիխ Էբերտ Հիմնադրամը (ՖԷՀ)՝ Գերմանիայի ամենահին քաղաքական հիմնադրամն է, որն իր հիմնադրման տարեթվից՝ 1925 թ.-ից ի վեր, սոցիալ-դեմոկրատիայի բնագավառում ունի հարուստ ավանդույթներ: Հիմնադրամն իր գոյությամբ և առաքելությամբ պարտական է Ֆրիդրիխ Էբերտին՝ Գերմանիայի պատմության մեջ ժողովրդավարական ճանապարհով ընտրված առաջին նախագահին:

Մեր աշխատանքն ուղղված է սոցիալ-դեմոկրատիայի հիմնական գաղափարներին ու արժեքներին՝ ազատությանը, արդարությանը և համերաշխությանը, ինչը մեզ կապում է սոցիալ-դեմոկրատների և ազատ արհմիությունների հետ: Որպես շահույթ չհետապնդող կառույց՝ մենք մեր աշխատանքն իրականացնում ենք ինքնուրույն և անկախ:

Հարավային Կովկասում/Հայաստանում ՖԷՀ-ը.

սպեղնոմ և կապ է պահպանում գործընկերների և կառավարման բոլոր թևերի, ուսումնական հաստատությունների, հետազոտական ինստիտուտների, ՀԿ-ների, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների ու մամուլի և տարբեր ոլորտների առանցքային դերակատարների հետ,

մշակում, իրականացնում և աջակցում է մի շարք ծրագրերի իր գերակա երեք ուղղություններով՝ տեղական և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցության շնորհիվ,

վերահսկում և վերլուծում է քաղաքական զարգացումները բոլոր երեք երկրներում՝ տեղական, գերմանական և եվրոպական փորձագետների, քաղաքական գործիչների, գործընկերների և շահագրգիռ հանրության լայնածավալ ցանցի ստեղծման նպատակով:

Հիմնական թեմաները.

Մասնակցություն և ժողովրդավարություն

Սոցիալական արդարություն, տնտեսություն և աշխատանք

Խաղաղություն և անվտանգություն



Քաղաքական դիսկուրս

Միտքը փոփոխություն է
Diskurs.am

Քաղաքական դիսկուրս հանդեսը հիմնադրվել է 2013 թվականի գարնանը՝ որպես քաղաքական մտքի և հանրային քննարկումների հարթակ, որը ուներ քաղաքացիական ակտիվ խմբերի և ակադեմիական շրջանակների միջև կամուրջ դառնալու նպատակ: Գլխավոր ազդակը եղել է Հայաստանում քաղաքացիական շարժման ակտիվացումը, ինչը տեղի էր ունենում թուլացած արհմիությունների և հանրային ոլորտի ընդհանուր ճգնաժամի, ինչպես նաև հասարակական կարգերի նկատմամբ քննադատական մտքի սակավության պայմաններում:

Քաղաքական դիսկուրսը նաև փնտրում է սոցիալական, տնտեսական և քաղաքական այլընտրանքներ՝ Հայաստանում գործող համակարգերից և տիրապետող մտածողությունից անդին: Վերլուծություններն ու մեկնաբանություններն ուղղված են սահմանադրականության, սոցիալական արդարության, իրավունքի գերակայության և քաղաքացիական շարժումների հարցերի ուսումնասիրմանը: Ստեղծումից ի վեր Քաղաքական դիսկուրսը հրապարակել է տասնյակ հոդվածներ և թարգմանություններ, լույս է ընծայել «Քաղաքատնտեսություն» ժողովածուն և այլ աշխատանքներ: Խմբագրակազմի անդամներն են՝ Գայանե Մելքոմ Մելքոմյանը, Դավիթ Ստեփանյանը և Վահրամ Սողոմոնյանը:

Հանդեսի կայքէջն է՝ www.diskurs.am:

Հետազոտության հեղինակի մասին

Արտակ Քյուրումյանը միջազգային զարգացման, հանրային քաղաքականության և կառավարման ոլորտի անկախ հետազոտող և խորհրդատու է: Նա աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարությունում: Որպես անկախ խորհրդատու Ա. Քյուրումյանն աշխատել է Համաշխարհային բանկի, Եվրամիության, ԱՄՆ ՄԶԾ և Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման նախարարության կողմից ֆինանսավորվող միջնաժամկետ ծախսերի, ծրագրի բյուջետավորման, հանրային պարտքի կառավարման և այլ ծրագրերում: Նա ունի ինժեներության մագիստրոսի կոչում Հայաստանի ամերիկյան համալսարանից և բիզնեսի կառավարման մագիստրոսի կոչում (MBA) Թուվեյնի համալսարանից:

Երևան 2019